

3944

Հայէրէց

2004



3947

ԿՈՐԴԻՏԱԿԱՌԹԵՏՆԵ

ՀՆՈՐԴԱՑ

ԵՒ ԽԸՆԱՑ ԵՒ ԹՈՐԴՐԴՈՑ

ԳՐԻՍՏՈՍԱԿԱՆ

Ո. ԵԿԵՂԵՑՅՈՑ



ԿՈՍՏԱՆԴԻԱՆԴՈՒՄ

ի աղարքի Յ. Մկնելովակոնի

- Ռ ՄԴ. Զ -

281.9

Մ-33

Совещание Патриарха
и Константина и прием
все Кафедральной
Часовни моей.

ԵՐԵՎԱՆԸ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ

3944

281.9

1032-44

231

Ա-38 ԵՐԵՎԱՆԻ ՀՈՍՏԹՈՒՆ

ՀԱՅՐԵԱՑ ԵՒ ԿԵԱՆԱՑ

ԵՒ ԽՈՐՀՄԴԱՑ ԳՐԱՏԱՍՈՍԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԱՆԿԱՆՑ

Ն Ո Ւ Շ Ե

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Լ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ՄՐԱՋԱՆ


Ա Ր Ք Ե Պ Ա Կ Ո Պ Ա Ւ

Ա Զ Գ Ա Ա Կ Ե Ր Ե Ւ Վ Ե Հ Ա Փ Ա Մ Ի Պ Ա Մ Գ Վ Ի Ւ

ԿՈՍՏԱՆԴԻՆԱՊՈԼԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԼԻՏԻԿԱ

1847 — Ռ Մ Հ Զ



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԽՍՈՐԴԻՐԴԱԿԻՒՅ ԽՈՏՄԲ ու զզափառ հաւա-
տացելոց յերկրի՝ քրիստոսականն ուուրբ Եկե-
ղեցի, գերօրինակ և բարձրագոյն խորհրդակ
զարմանալի և ճշմարտացոյց հոգ և որ նշանոք և
աստուածապարգեւ ձրիստուր շնորհօք : ա-
ռաւել քան ընթերվայնացն ընկալեալ գործվ բղ
ծայրագոյն բարեցն ճոխութիւնս փառաց և
բարեաց, և 'ի վեր քան զլուսեղինացն դասա-
կարգութիւնս համարձակագոյն վերամբար-
ձեալ Երկնասալաց թեազ կատարել աստուած-
գիսութեան և աստուածապաշտութեան՝ ոչ
միոյն մերձաւոր և ընտանի հանգիսանայ աստ-
ուածային յաւիստենական և ամենացանկալի
փառաւորութեանն, այլ և նորին խոկ ամենա-
մեծ վայելլութեանն : և յաւերժական Երա-
նութեանն և ժառանգաւոր :

Ի ամս յորդախաղաց վասելք աստուա-
ծային մշտահաս շնորհաց, գնան ազրերացեալ
առաւել քան զրառառաթեաց գեան Եղե-
մեան, յառօգումն հոգւոց զանմահ կենդա-
նութեան ուղիս զաւրիթարարս և 'ի սպա-
զարերութիւն աստուածահանց գործոց ա-
ռապինական բարեմասնութեանց :

Ի ամս անհման և առնենասէր թագաւորն
վերին հանեցաւ հաստատել զանչափ բարձ-
րութեան սիրոյ իւրոյ և զամենաւատ բարե-
գթութեանն զաբժու . և զօրս Եկիս աստա-
նօր իրը 'ի մի սիրու և 'ի մի հոգի միացնալը
հաւաստով . յուսով և սիրով . կնքեաց աստ-
ամածային շնորհիւ իւրով 'ի հաղորդութիւն
մեծվայելութեան անրու բարութեան յա-
շանենական փառաց իւրոց սրբացուցիչ նը-
շանաւն իւրով :

Ամս անհմենին անմերձենալի Էն աղջո-
մուզ մեղք պատրանեաց աշխարհի , և ան-
դարձ է խոյս ոգւոց խուտարախրոց . զի մը շ-
տափայդ վասի 'ի սմա ըստ Հշմորդութեան
եօթնանշայլ խորհրդոցն մատակաբարութիք ,
առ առ ել պայծառ ագայն քան զեօթնաշահեան
ճրագարանն սոկեծայլ աշտանակին հնոյ խո-
րութին պիտութեան :

Ընդ այսրան ներբին և հոգեւոր և բազ-
մաշան մեծամեծ վասաւորութիւնն Եկեղեց-
այն Քրիստոսի զմայլեալ իմ հոգւով և մաօք
այնչափ . մինչեւ զնկնախոն մուաց իմոց մո-
ռացեալ զանքաւականութիւնն . սրտեռ անդն
բաղձանօր ձեռն 'ի գործ արկի յոյս պրաւոր
խորհրդածութիւն՝ վասահացեալ և յուսո-
ցեալ յամենաբաւական շնորհս աստամածա-
յին առատամեռնութեանն . որ միայն է լը-
ցուցիչ հոգւոց բաղձանաց : ուզով խորհրդ.

դոց մասաց, և զարթուցիչ հոգեւոր իմաստից
և խորհրդոց բարեաց՝ ի վառ մեծի անուան
իւրոյ և՝ ի փրկութիւն հոգւոց մերոց :

Առ այս փութացայ մասշիլ ՚ի տեսու-
թիւն անենամարուր եղերաց լայնածաւալ
ծովաւ առաստարուղին և աստուածային շնոր-
հաց սուրբ եկեղեցւոյ : անքաւական գոլով
՚ի յանդզնութիւն մանրախոյզ քննութեան,
ահարեկեալ ՚ի բանեն զըալի անձին ոչ հա-
նաչելուն :


Տկարատես մօսաց մեր առաջի իրրեւ քա-
ջացոյց զիտակ ունելով զաւետարանական
և զաւաքելական ողջամիտ վարդապետութիւն.
բատ կարի մեր փութացայ զսրբարար խոր-
հրդոցն եկեղեցւոյ նկատել զաւուութիւն . և
ներքին զիտողութեամբ խորհրդածեալ ՚ի
նոսա ուրոյն ուրոյն՝ վափաք հոգեւոր բաղ-
ձանաց իւնց ստիպեաց զիս ցայս վայր : քա-
րոզել զհիտնայի մեծութիւն աստուածագործ
արդեանց մարդասէր և փրկագործ անօրե-
նութեան Յիսուսի միջնատասի Տեսուն մերոց :



ՅԱՄԿԻ ԳԼՈՒԽ

- | | | |
|----|---|----|
| Ա. | Յաշտ Եվրոպա-սե լե չկան իցե : | 1 |
| Բ. | Յաշտ միջնաստրա-լեռն ե- կելլու-ն : | 17 |
| Գ. | Օսմանա-լիւ-ն հին եկելլո- ւու ընդ նորոյ : | 23 |
| Դ. | Եկելլոյն բաժանի յերին . | 41 |
| Ե. | Յաշտ շնորհաց սարբ եկե- լու-նու քրիստոսի : | 49 |
| Զ. | Յաշտ սահմանի շնորհաց : | 55 |
| Է. | Յաշտ բաժանման շնորհաց : | 61 |
| Ը. | Յաշտ բաժանման ներին շն- որհաց : | 66 |
| Թ. | Յաշտ պայլ լինելը ՚ է շն- որհաւ լուսուծոյ : | 75 |
| Ժ. | Յաշտ պահպակ նշանաց եկե- | |


- վեցայն · Բ. կիւռութեան : 88
 մս. Յաշտ և այլն իրահրաշաւ են -
 վեցայն : 121
 մբ. Յաշտ աւրագութեան իր-
 կութայն : 127
 մդ. Յաշտ հեղինակին իրահրաշաւ : 133
 մԴ. Յաշտ ըստաւան իր-
 կութայն : 153



you by name and place of residence. I do
not doubt it is a well known fact that
the author of the paper you are reading is a
man of considerable wealth and influence.

Զի գիտացես, թէ ո՞րդես դարձ իցէ քեզ
՚ի տան Առաւածոյ շրջել . որ է եկեցեցի Առ-
աւածոյ կենդանեւոյ , սիւն եւ հաստատու-
թիւն ճշմարտութեան :

(Ա . *Sþarðr.* . դ . 15) .



ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Եկեղեցւոյ՝ թէ զի՞նչ իշխ :

Եկեղեցի բառու է յունական . և ստուգարանի հրաւիրումըն և կոչումն առ երեւելի ինչ համախմբութիւն . վասն որոյ ժողով մարդկային բաղմութեան առանց տարածայնութեան 'ի մի վայր 'ի միարանութիւն գումարելոց՝ յաղագս միոյ իրիք խորհրդոյ և սպաշտաման , կոչի Եկեղեցի . ըստ այնում , « Յայն Ճամ Եկեղեցացոց արքայ Ասղումնն զամենայն ծերս խորայելի ո » (Գ . թագ . ը . 1) :

Այս աղնիւ անուն՝ խորհրդաբար նշանակե զուալհական Ժաղո-

վուրդս Աստուծոյ, որք յատուկ
 կրօնիւ աստուած պաշտութեան
 և զանազան ծիսիւ արարողութե
 միաբանին ՚ի հաւատս աստուած-
 դիտութեան, և համախմբին ՚ի
 մի պաշտօն ծառայութեան ան-
 ժըստելի օրինացն Աստուծոյ :
 Որպէս էք ՚ի հնումն ազգն իսրա-
 յէլի, որք պաշտէին զԱստուած,
 Ճանաչելով զնա ամենակարող ա-
 րարարիչ և տէր, խնամարար ա-
 մենայնի, և միաբան հաւատային
 և թէ գալոց է յաշխարհ մեսխայն
 Քրիստոս վասն փրկութեան ամե-
 նեցուն :

Խոկ յորժամ եկն յաշխարհ ՚ի
 լրման ժամանակի, և յայտնեցաւ
 մեծահրաշ և փրկարար խորհըր-
 դով իւրով, կամակոր մոօք յա-
 մառեալ ՚ի չարութիւնս նախան-
 ձու և հպարտութեան՝ կուրա-

ցան կուրութիւն մտաց . և ոչ
 իսկ ծանեան զնա , և ոչ ընկալան
 զլոյս սքանչելի փրկութեան 'ի հո-
 գիս իւրեանց , վասն որոյ և զրկե-
 ցան յաւետարանական երանու-
 թեանց և օտարացան յէստուծոյ
 և յարքայութեանն վառաց : « Իսկ
 արդ՝ զօր խնդրերն խրայէլ , այ-
 նըմ ոչ եհաս » (Հայութ. ժա . 7) :
 Եւ վասն սոցին ողբալի կուրու-
 թեանց և թշուառագոյն գնացից
 անօրէնութեան , կանխաւ խօսե-
 ցաւ մարդարէն Եսայի . « Օ Ճա-
 նապարհն խաղաղութեան ոչ ծա-
 նեան , և ոչ գոն իրաւունք 'ի Ճա-
 նապարհս նոցա . զի շաւիդք նո-
 ցա՝ ընդ որ գնան , խոտորեալք
 են , և ոչ ծանեան զխաղաղուն .
 վասն այնորիկ հեռացան 'ի նոցա-
 նէ իրաւունք , և մի հասցէ առ
 նոսա արդարութիւն . մինչդեռ

ակն ունեին լուսոյ՝ եղեւ նոցա
խաւար, և մինչդեռ սպասէին նը-
մա՝ ընդ մութն շրջեցան ո (ծթ.
8): Եւ վասն չարաչար մոլորու-
թեան և կամակոր կուրութեան
նոցին և Յօր ասաց մարդարէա-
բար . “ Ետուե պատահեսցի նո-
ցա խաւար, և ’ի միջօրէի իրբեւ
’ի գիշերի խարիսափեսցին ո (Ե.
14):

Կայց ’ի նորումս ամենայն ազգ-
հաւատացելոց միախորհուրդ գը-
տան ’ի յաւիաենական ճշմարտու-
թիւնս՝ և միաժողով ’ի քրիստո-
նէական որբազան կրօնս, որը մի-
արանութիւ հաւատան և խոստո-
վանին՝ եթէ Քրիստոսն է որդի
Աստուծոյ կենդանուոյ և ճշմարտի.
ըստ այնմ, “ Դու ես Քրիստոսն
որդի Աստուծոյ կենդանուոյ (Ուսպ.
Ժզ. 16): Ո՞ք հաւատացաք և

ծանեաք , եթե դու ես՝ Քրիստոս
որդի Աստուծոյ ։ (Յօհ . Ղ . 70) :

Քրիստոսնէից այս ուղղափառ
դաւանութիւն , է դու ո՞ն ասու
ուածային երանութեց , ժառան
գաւորութի զանազան շնորհաց և
անշարժելի հիմն սուրբ Եկեղեց-
ւոյն Քրիստոսի ։ Ա վերայ այ-
դըր վիմի շնորհաց վեկեղեցի իմ ։
(Ուստ . մզ . 18) :

Ասպա իրաւամբ ժողով քրիս-
տոնէից ասի և է Եկեղեցի Քրիս-
տոսի . զի ընկալաւ զամենայն հո-
գեւոր բարիս և զշնորհս սրբարար
խորհրդոյն Քրիստոսի . և ցու-
ցանէ զառաքինական գործու զար-
ժանացուցիչս վառացն արքայու-
թեան : Յորմէ օտարացաւ , մեր
ժեցաւ ժողովն հրէից լցեալ կա-
մարաշտութեամբ և նախանձու .
վասն որոյ Յիսուս՝ առ յանդիմա-

նութի նոցա , և առ հաստատաւ-
թիւն յուսոյ քրիստոնէից՝ ասաց .
“Ա ասն այսորիկ ասեմ ձեզ , զի
բարձցի ՚ի ձենչ արքայութիւն լո-
տուծոյ և տաշի ազդի , որ տոնի-
ցէ զպտուզս նորա ” (Այստի .
իս . 43) :

Եկեղեցին է խոհրդակոն մար-
մին ՚Քրիստոսի , յօդակապեալ
ընդ նմա հաւատով և սիրով . և
իւրաքանչիւր հաւատացեալք են
իբրեւ անդամք պատշաճապէս
գասաւորեալք , որք ընդունին զա-
ճումն հոգեւորական և զզօրու-
թիւն ՚ի գերբնական պարդեւա-
ցըն ՚Քրիստոսի , որ ընդհանրա-
կան և ինքնիշխան գլուխ է ՚ի վե-
րա եկեղեցւոյն իւրոյ . զոր օրի-
նակ ՚ի մարդկացին մարմինս ամեւ-
նայն կենդանական և զգայական
ազդմանց և ներգործութեանց ”

գլուխն է սկիզբն , սոյնպես և
խորհրդական մարմինն Պրիստո-
սի՝ Եկեղեցին , զամենայն կենդա-
նարար ներքին զօրութիւնս շը-
նորհաց և զներդործութիւնս հո-
գեւոր ազգմանց ՚ի գերամբարձ
գլուխ իւրմէ ՚ի Պրիստոսէ առ-
նու լրապես . ըստ սյնմ « Եւ
զնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն
իրկը Եկեղեցւոյ , որ է մարմիննու-
րա , և լրումն՝ որ զամենայն յա-
մենայնի լնու » (Եկես . առ . 22) :

Օքրիստոս գլուխ Եկեղեցւոյ
խոստվանիմք կրկին խորհրդա-
ծութեամբ : Կախ՝ զի ունի տի-
րապես և ըստ ամենայնի իրաւու-
նըս իշխելոյ և տիրելոյ ՚ի վերայ
Եկեղեցւոյ իւրայ , ՚ի վերայ ամե-
նայն հաւատացելոց . վասն զի
փրկեաց զամենեսին իւրով իսկ
փրկարար արեամբ ՚ի դատապար

տութենէ մեղաց , և անսլարստական մահուամբն ապրեցոց , և կորզեաց ՚ի ձեռաց դժոխոց . մանաւանդ և բազմաշնորհ արդեւամբ կամաւոր չարչարանաց իւրոց հաղորդս կացոց զամենեսին իւրոյ իսկ աստուածային բարեացրն և փառաց : « Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի (Մատ . իը . 18) : ՚Պրիստոս սիրեաց զեկեղեցի . և զանձրն իւր մատնեաց վասն նորա , զի զնաս սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ , զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի » (Ղոփեա . Ե . 25 . 26 . 27 .) :

՚Յրկրորդ՝ զի միացեալէ ՚Պրիստոս ընդ եկեղեցւոյն կենդանացուցիչ շնորհօք և առանձին սիրով . և մինչեւ ցկատարած աշ-

խարհի և յաւիտեան ոչ բաժանի ՚ի նմանել . այլ իբրեւ գլուխ՝ ներքին կենդանական ազգմամբն խնամմել զբարցական մարմին իւր զեկեղեցի , առաջնորդելով յամենայն ճանապարհս վրկութեան , լուսաւորելով ճշմարտութեամբ աւետարանին , զօրացուցանելով ՚ի կատարելութիւնս առաքինական գործոց առ ՚ի ժամանեցուցանել յերանութիւնս փառաց երկնից արքայութեան : « Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ չեւ ՚ի կատարած աշխարհի (Առա . իր . 20) : Եւ թէ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումերե՛ ՚ի մէնջ . զի նովաւ կեամբ և շարժիմք և եմք » (Պատճ . ժէ . 17) :

Ահա սոքօք յայտնի երեւի . եւ թէ Քրիստոս է ընդհանորական գլուխ եկեղեցւոյ . ինքնիշխան

հրամայող, ծայրագոյն իշխող,
 ներքին կառավարիչ և արդարա-
 բլնենին դատաւոր ամենեցուն .
 Եսկ առաքեալք՝ և օրինաւոր յա-
 ջորդք նոցին՝ անուանին և են փո-
 խանորդք Քրիստոսի և կամ պաշ-
 տօնեայք նորին, ևս և երեւելի
 ացցելուք կամ հոգաբարձուք ե-
 կեզեցւոյն Քրիստոսի . ահայա-
 սոսիկ վերածին բանքս միայու-
 թեան : “Որ ընդունի զձեզ՝ զիս
 ընդունի (Առաք. Ժ. 40) : Այս-
 պէս համարեացին զմեզ մարդիկ
 իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի
 և հաղարապետս խորհրդոյն Առ-
 սուծոյ (Ա. Կոմ. դ. 1) : Արա-
 ծեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աստու-
 ծոյ . վերակացու լինել մի իբրեւ
 ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստու-
 ծոյ ” (Պիտ. Ա. Կոմ. Է. 2) :
 ‘Դարձեալ կեզեցինստորագ-

բական սահմանաւ բացայայտ իմն
 սահմանի ըստ անհրաժեշտ աւսն-
 դութեան աստուածաբանից՝ այս-
 պէս . “ Եկեղեցին է ընտրեալ Ճռ-
 զով հաւատացելոց . ունող զսրբ-
 բաղան կնիք միբառութեան . և է
 միաբանեալ ’ի միութեան հաւա-
 տոյ աւետարանական ճշմարտու-
 թեան . ’ի հաղորդակցութեան
 արդարացուցիչ խորհրդոցն Պր-
 բիստոսի , և ’ի պաշտամունո ծա-
 ռայութեն Վասուծոյ . և է միշտ
 պաշտպանեալ աներեւոյթ ինա-
 մօք ’ի Պրիստոսէ ’ի կենդանա-
 ցուցիչ գլխոյ իւրմէ . և երեւե-
 լի այցելութեամբ կառավարեալ
 յեպիսկոպոսաց յօրինաւոր յաջոր-
 դաց սրբաղան առաքելոց անտի ” :

“ Ճռզով ասացաւ ո , որով
 յայտնի լինի , եթէ եկեղեցին է
 միաբանութիւն հաւատացեալ

մարդկան տարածեալ և սփռեալ
յամենայն աշխարհ և անբաժան
՚ի որբազան կրօնս քրիստոնէական
ճշմարտութեան :

“ Եւնող զլլրբազան կնիք մը
կրտութեան ո ասելով, արտաքոյ
քրիստոնէական եկեղեցւոյ մնան
հրեայք և հեթանոսք մոլորահա-
ւատք, որք են միշտ ՚ի վիճակի
դատապարտութեան :

“ Ո՞ւաբանեալ ՚ի միութեան
հաւատոյ աւետարանական ճըշ-
մարտութեան ո ասելով, ՚ի բաց
մերժին յեկեղեցւոյ հերետիկոսք
և ուրացողք ճշմարտութեանն
Քրիստոսի : Արագիսիք են Արիոս,
Եւնոմիոս, Ա աղենդէս, և Գայի-
ոն . որք արարած ասացին զրդին
Աստուծոյ զի՞միսուս Քրիստոս,
և յետ ժամանակի դոյացեալ յո-
ցնչե և կամ յայլմէ եռւթենէ, և

ոչ յԱստուծոյ Հօրէ անժամանաւ
կաբար ճնեալ որդի յաւիտենաւ
կան . որոց սակի էր և ամբարիշ
տըն Անակեդոն , որ ուրացաւ ըզ
լինելն սուրբ Հոգւոյն Եստու-
ծոյ հաւասար և փառակից Հօր և
Արդւոյ . նման սոցա են Վեստոր ,
Էւտիքէս , և այլ չարափառք՝
որք չարաչոր բանս վիժել յան-
դրդնեցան ընդդէմ աւետարա-
նական բացայայտ ճշմարտութե՛ .
վասն որոյ յանդամոց եկեղեցւոյ
՚ի բաց հերքեցան նղովիւք ուղ-
ղափառ սրբազն Հայրապետաց
՚ի մէջ տիեզերական սուրբ և
հոգեգումար Ժողովոց :


“Ի հաղորդակցութեան ար-
դարացուցիչ խորհրդոցն ՚Քրիս-
տոսի և ասելով , յայտնի ցուցա-
նի թէ ոչ ոք ՚ի յանդամոց եկե-
ղեցւոյ արտամերժի ՚ի մասնակ

ցութենել սրբարար խորհրդոյն ,
բայց միայն յամառեալք 'ի չարիս ,
և իրաւամբը բանաղբեալք ըստ
յանցանացն իւրեանց , որք չու-
նին և համարձակութիւն մեր-
ձիւ առ սրբարար խորհուրդս ե-
կեղեցւոյն և վայելել զշնորհս :

“ |շւ 'ի պաշտամունս ծառա-
յութե Վատուծոյ ասելով , նշա-
նակի վախճանական գործ եկե-
ղեցւոյ , որով ընդունի յՎատուծոյ
զպատկ երանութե . որովհետեւ
եկեղեցին գիտե , և ճանաչէ զգե-
րազանց մեծութիւն յՎատուծոյ՝
զշնորհեալ գերբնական պարգեւո-
նորին , և զպատրաստեալ զերա-
նաւետ փառան . վասն որոյ փու-
թայ միշտ 'ի պաշտօնի երկրպա-
գութեան Վատուծոյ գտանիլ և
յառաջանալ 'ի ծառայութիւնս
ամենաբարի կամաց նորին :

“ Եւ պաշտպանեալ աներեւ-
 ոյթ խնամօք ՚ի Քրիստոսէ ՚ի կեն-
 դանացուցիչ գլխոյ իւրմէ ո ասա-
 ցաւ . վասն զի եկեղեցին է բա-
 րոյական մարմին Քրիստոսի հա-
 ւասով և սիրով միացեալ ընդ նր-
 մա . և ինքն Քրիստոս է գլուխ
 եկեղեցւոյ , ընդ հանրապէս զօրա-
 ցուցիչ և սրբացուցիչ ամենե-
 ցուն ներբինքարերարութեամբ :
 Իսկ զարտաքին կառավարութիւն
 և զայցելութիւն եկեղեցւոյն
 յանձնեաց առաքելոց իւրոց և
 նոցին յաջորդաց եպիսկոպոսաց և
 երիցանց . վասն որոյ ասացաւ ՚ի
 վախճանի , և երեւելի այցելու-
 թեամբ կառավարեալ յեպիսկո-
 պոսաց յօրինաւորյաջորդաց սրբ-
 բազան առաքելոց ” : և Պնացէք
 այսուհետեւ՝ աշակերտեցէք զա-
 մենայն հեթանոսս . մկրտեցէք ըդ

նոսա յանուն Հօր՝ և Արդւոյ՝ և
 Հոգւոյն սրբոյ, ուսուցելը նոցա
 պահել զամենացն զոր ինչ պատ-
 ռւիրեցի ձեզ (Վար. իր. 19, 20):
 Օերիցունս այսուհետեւ աղա-
 չեմ, իբրեւ երիցակից՝ և վկայ
 չարչարանացն Քրիստոսի. որ և
 հանդերձելոց փառացն յայտնե-
 լոց հաղորդ. արածեցելը՝ որ ՚ի
 ձեզ հօտդ է Աստուծոյ ո (Պիտ.
 ս. Եպի. Ե. 1):



ԳԼՈՒԽ Բ:

Յաղագո սկզբնաւորութեան Եկեղեցւոյ:

Ի սկզբան աշխարհի հաստա-
տեաց Աստուած զեկեղեցի իւր,
կոչեալ զազդ մարդկան՝ ներքին և
սրբազն իմն աղդեցութեամբ՝ ի
կրօնս աստուածդիտութեան և
աստուածպաշտութե, և յայտ-
նելով ամենեցուն զհարկաւորն և
զկարեւորն առ ծանօթութի ձըշ-
մարտութեան և առ կատարու-
մըն կամաց իւրոց . սկսեալ ՚ի նա-
հապետաց անտի մինչեւ ցլրումն
մարդարէից՝ տարածէր զհարկա-
ւոր գիտելիս աստուածպաշտու-
թեան . ոչ միայն միում ումեք
յայտնելով զբովանդակ խորհուր-
դըս աստուածպաշտութեան, որ

(1010)
41/253

16429-58

ուներ կատարելագործիլ շնորհիւ
մարդեղութեան Յիսուսի Քրիս-
տոսի , այլ ընդ ժամանակս զանա-
զան անձանց՝ զանազանս մատա-
կարարեր . դոր օրինակ՝ զայլ ինչ
Ագամայ , և զայլ ինչ Նոյի , զայլ
ինչ անտեսութիւն խորհրդոյ աս-
տուածոպաշտութեան յանձնեաց
Աքրահամու , և զայլ յայտնուիս
արար Ուվակեսի , առ իւրաքանչ-
իւր նահապետս և մարդարես
մասնաւոր ազդեցութիւն առնե-
լով . որը ամեներին հայեին առ
մի խորհուրդ աստուածային տնօ-
րենութեան և մարդասիրութե .
“ Իւազում մասամբք և բազում
օրինակօք կանիսաւ խօսեցաւ Առ-
տուած ընդ Հարս մեր մարդարե-
իւր ” (Եշր . առ . 1) :

Ուրեմն միշտ անպակաս գը-
տաւ ծաղկեալ խորհուրդ աս-

տաւածալտշառւթեան բնդ դարս
 դարս . թեպէտ երբեւմն երեւեր
 խաւար կուամոյտղ խոսւթեանն ,
 բայց լուսաշաւիլ պայծառութի
 խորհրդոցն աստուածալտշառւ-
 թեան յեկըզեցւոյն Աստուծոյ
 անապակաս լինելով՝ փարատեր հա-
 լածէր զիստւարամած սնոտի պաշ-
 տամունա՝ յանդիմանեալ զմոլոր
 կարծիս հեթանոսութեան : Օքր-
 օրինակ մարդարեն Եղիա վառ-
 եալ նախանձու աստուածային
 ճշմարտութեան զամօթի եհար
 զարբայն Աքաար , որ պաշտեր ըղ-
 կուռոս Բահազուր , և ղքաղումն ի
 ժողովրդոցն խրայելի յօժարե-
 ցուցաներ առ այն կուամոլութի
 սուտ մարդարեիւք : Օի սրաա-
 հառաչ աղօթիւք նորին ակներեւ
 ցուցաւ ի հանդիսի ամենեցուն
 ամենակարող զօրութիւն ճշմար-

տին Եստուծոյ . վասն որոյ և ամենայն ժողովուրդն անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր՝ աղաղակելով խոստովանեին սյուսպես : « Երդարեւ տէր՝ նա է Եստուած . տէր նա է Եստուած » (Գ . թագ . ժը . 39) : Եհա աստանօր ծագեալ լոյս անձալաշտութեան ուղիղ կրօնից փարատեաց զիսաւար կռամոլութեան : « Օ-ագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց . ողորմած՝ գթած՝ և արդար է տէր » (Աաղ . ձժա . 4) :

Եկեղեցիս այս պաշտպանեալ լիներ 'ի սկզբանե անոիցաստուածային այցելութենե և 'ի զանազան խնամոց , առ 'ի մնալ աղատ 'ի վիճակե անաստուածութեան . ըստ այնմ , « Քիշեա զժողովուրդքո զոր ստացար 'ի սկզբանե , վըրկեցեր զվիճակ ժառանդութեան

Քո՞ս (Առաջ. հա . 2) :

Առվիմք ցուցանի մշտնչենաւ
ւորութիւն եկեղեցւոյն Եսաու-
ծոյ . որպէս բացատրէ Եշղնիկ կողէ-
բացի (Կիրք . գ . 229) . յասելն .
« Եկեղեցի Եսաուծոյ ՚ի սկզբանէ-
աշխարհի էր , զորմէ և ՚Իտւիթ
՚ի Հոգւոյն սրբոյ ուսեալ մատու-
ցանէր զազօթս , թէ յիշեա՛ զեկե-
ղեցի քո՝ զոր ստացար ՚ի սկզբա-
նէ » : Եյս եկեղեցի՝ անուանի
հին եկեղեցի , որոյ անդամք էին
ազգք իսրայէլացւոց . որք թէ պէտ
ունէին զաստուած պաշտութիւն
գրական կամ մովսիսական օրի-
նաց , բայց և անկատար էին ՚ի
ծանօթութիս ածդիտութեան :

Խակ քրիստոսական եկեղեցին
կոչի նոր եկեղեցի . որոյ անդամք
են հաւատացեալք սքանչելի մար-
դեղութեան և փրկարար անօրէ-

նութեան Յիսուսի ՚Քրիստոսի .
 և մլրտեալքյանուն ամենասուրբ
 Երրորդութեան . որով ունին ըզ
 կատարեալ աստուածգիտութի
 'ի Նայրն ամենակալ՝ 'ի Ալլորին
 միածին և 'ի սուրբ Նոդին յանե-
 զըն և 'ի կատարեալն . և հետե-
 ւելով կատարելագոյն ուսման
 լուսաշաւիղ Ճանապարհին աւե-
 տարանական Ճշմարտութե՛ ըն-
 դունին զքրիստոնեական ողջա-
 միտ և կատարեալ վարդապետու-
 թիւնո քարոզեալս 'ի սրբազնան ա-
 ւետարանչաց և յառաքելոց . ըստ
 այնմ և Օոր մեքն քարոզեմք և
 խրատեմք զամենայն մարդ և ու-
 սուցանեմք զամենայն մարդ ամե-
 նայն հոգեւոր իմաստութեամք .
 զի կացուսցուք զամենայն մարդ
 կատարեալ 'ի ՚Քրիստոս Յիսուս ''
 (Ալլը . առ . 28) :

ԳԼՈՒԽ Գ.

Զանազանութիւն հին եկեղեցւոյ
ընդ նորոյս :

Օ հին եկեղեցին զազգն հրեթից՝ ընդ նոր եկեղեցւոյս ընդ քրիստոնէից բաղդատեալ, գտանեմք բամատեսակ թերութիւնս և պակասութիւնս 'ի հին եկեղեցին՝ յազգն հրեթից :

Ամի՞ կարեմք կոչել զնա եկեղեցի սկսեալ և հանդերձեալ առվայելս ապագայ շնորհաց և փառաց գալստեան մեսիային՝ Հիսուսի կենարարին մերս, որ իրքւ եկն յաշխարհ՝ աստուածավայել հրաշագործութիւն յայտնի իսկ առնելը ամենեցուն, և թէ ինքն էր Հիսուս փրկիչն աշխար-

հի , յոյր վերայ և մարդարէիցն
 բանք վկայէին , թէ նա է Քրիս-
 տոսն , որ տռաքեցաւ փրկիչ և
 կեցուցիչ հրէից և հեթանոսաց .
 իսկ ապօտամբեալ հրէից 'ի շնոր-
 հաց նորին և 'ի փառաց , և ան-
 դրքան զշափ գառածեալ 'ի կու-
 րութիւնս կամաց իւրեանց , զի-
 նեցան նախանձու և առելութէ
 ընդդէմ Հիսուսի . մինչ զի անի-
 րաւ զրպարտութեամբ և 'ի մահ
 խաչի գատապարտել ժպրհեցան .
 որով իսպառ մերժեցան 'ի փրք-
 իարար շնորհաց անտի , և զրկե-
 ցան յամենացանկալի փառաց նո-
 րին աստուածութեան : « Հիւր-
 ոլն եկն , և իւրբն զնոտ ոչ ընկա-
 լան (Հօն . առ . 41) : Այլ իսրա-
 յէլ երթայր զհետ օրինացն ար-
 դարտութեան՝ և յօրէնս արդա-
 րութե ոչ ժամանեաց ո (Համալ-
 թ . 31) :

Իսկ զնորս այս քրիստոսական
 սուրբ եկեղեցի՝ արժանէ անուա-
 նել եկեղեցի կառարեալ ՚ի խոր-
 հուրդս փրկութեան, և ժամա-
 նեալ առ շնորհս որդեգրութեան
 Նօրե Կատուծոյ, և առ ժառան-
 դաւորութիւն երանական փա-
 ռաց աստվածականութեան. ո-
 րովհետեւ քրիստոսական սուրբ
 եկեղեցի խոստովանի և հաւա-
 տայ ՚ի փրկարար մարդեղութիւն
 կենարարին Հիսուսի, և յաս-
 տուածագործ սբանշելիսն և ՚ի
 շնորհասիմիւռ Ճշմարիտ վարդա-
 պետութիւնս նորին, և յուսայ
 գտանել զթողութիւն մեղաց ՚ի
 ձեռն զզջման արդեամբ կամա-
 ւորական մահուան և անպարտա-
 կան խաչին Հիսուսի փրկչին մե-
 րոյ. « Իսկ որք ընկալանն զնա, ետ
 նոցա իշխանութիւն որդիս Կա-

տուծոյ լինել՝ որոց հաւասար-
ցեն յանուն նորա (Հայկ . առ .
12) : Հեթանոսք՝ որը ոչ երթա-
յին զհետարդարութեան՝ հասին
արդարութեան . այնում արդարու-
թեան՝ որ ՚ի հաւատոց անտի և
(Հայկ . թ . 30) :

Երկրորդ՝ հին եկեղեցին միայն
զօրինակս և զձեւակերպութիւ-
նըս տեսաներ ապագայ փրկարար
խորհրդոցն ՚Քրիստոսի . և այն ՚ի
ձեռն ծառայիցն Կտուծոյ մար-
գարեիցն և նահապետաց՝ այլեւ
այլ եղանակաւ յայտնեալ . եր որ
օրինակաւ նմանութեան , և եր
որ մասամբք բանից տեսութեան .
զոր օրինակ զկուսական ծնունդն
իւր երեւեցոյց օրինակաւ ՚ի ձե-
ռն ՚Դանիէլի , “ ՚ի վեմն հառեալ
՚ի լեռնեն առանց ձեռինու (՚Դան .
թ . 45) : Դակ մարգարեիւն Կտոյ-

եայ յայտնի բանիւ . « ահա կոյս
յղասցի և ծնցի որդի » (Է . 14) :

Օ խորհուրդ վրկարար խա-
չելութեանն յայտնեաց Աքրա-
համու ՚ի հրաման անդր զենմա-
նըն իսահակայ . որոյ փոխանակ
խոյն կախեալ ՚ի սարեկայ ծառոյն .
(Օհ . իլ . 13) ըստ այնմ՝ « Աք-
րահամ ցանկացաւ տեսանել զօրն
իմ (այսինքն զօրինակն) , ետես
և ուրախ եղեւ ո (Հօհ . ը . 56) :
Իսկ այս պարզ բանիւ մարդարե-
ռութեանն Եսայեայ յայտնագոյն
եւս քարողեցաւ , թէ և իբրեւ
զոշխար ՚ի սպանդ վարեցաւ . եւ
իբրեւ զորոջ առաջի կորչի անմը-
ռունչ կայ . այնպէս ոչ բանայ ըդ
բերան իւր » (Ծգ . 7) :

Ահա սցսոքիկ ամենայն ՚ի ձեւ-
ոքն մարդարեից և նահապետաց
նախագուշակեալ լինեին ՚ի հին

եկեղեցւոչ . այլոչ արդիւնաւոր
 եալ բերէին զշնորհս և զփառո
 սրբարար և փրկագործ խորհրդո-
 ցըն փրկչին Յիսուսի : Խակ ՚ի նո-
 րը յայս սուրբ եկեղեցին Քրիս-
 տոսի , յայտնեցաւ այս ամենայն
 խորհուրդ փրկութեան . ոչ ընդ-
 օրինակօք՝ այլ յայտնի տեսութը
 աստուածային անժխտելի սրան-
 չելեաց և շնորհաց և Ճշմարտա-
 գոյն խոստմանց յաւխանական ե-
 րանութեան . ոչ մասնաւոր ինչ
 ծանօթութեամբ և կամ ընդ ա-
 զօտ տեսութեամբ , այլ լիուլի
 անթերի և լուսաւորագոյն յայտ-
 նութը . ոչ ՚ի ձեռն մարդարէից
 և նահապետաց , այլ և ՚ի ձեռն
 տեառն շնորհաց և հեղինակին Ճշ-
 մարտութեան Յնի կենարարին
 մերոյ : և հազում մասամբք և բա-
 զում օրինակօք կանխաւ խոսեցաւ

Աստուած ընդ հարս մեր մարդա-
րէիւք . ՚ի վախճան աւուրցս այ-
սոցինի խօսեցաւ ընդ մեղ որդւո-
վըն՝ զօր եղ ժառանգ ամենայնի ,
որով և զյաւիտեանս արար ՞
(ԱՅ ։ ա . 1) : Եաց ձեր երանի
է աշաց՝ զի տեսանեն , և ականջաց
ձերոց՝ զի լսեն . ամեն ասեմ ձեղ .
զի բաղում մարդարէք և արդարք
ցանկացան տեսանել՝ զօր աեսա-
նէքդ , և ոչ տեսին . և լսել՝ զօր
լուայքդ , և ոչ լուան ՞ (Ուար .
Ժ գ . 16) :

Երրորդ՝ հին եկեղեցին չունէք
զներբին ձշմարիտ սրբութիւն և
աղաստութիւն ՚ի սկզբնական մե-
զաց և ՚ի ներդործականաց . զի
թէոլէտ վասն մեղաց մասուցա-
նէին զզոհս և զօրատարագս ող-
ջակիզաց , բայց ոչ բնաւ հաճե-
լիք եղեն Աստուծոյ առ փրկու-

թիւն մեղաց նոցին . այլ համար
 իւր իբրեւ դործ իմն բարեպաշ-
 տութեան և ցոյց աստուածակաշ-
 տութեան . մանաւանդ տիպ և
 օրինակ ճշմարիտ պատարագին
 Քրիստոսի , որ մասուցաւ ՚ի վե-
 րայ փրկաւէտ մեղանոյ խաչին ՚ի
 քաւութիւն մեղաց մերոց . որ-
 պէս եղեւ առ Անգուշիւ , (Պ. Ա. 24). առ ՚Եղիսաբէթունիւ (Պատա-
 ր. 21) և առ ՚Հղիայիւ , (Գ. Ձ. Ա. Ժ. Տ. 38) : Այս ամենայն մասուց-
 մունք պատարագաց չունեին ըզ
 զօրութիւն բառնալոյ և տալոյ
 զստացումն ներքին սրբութեան .
 ըստ այնմ՝ և ընդ զոհս և ընդ
 պատարագս ոչ հաճեցար . լսելիս
 հաստատեցեր ինձ . զողջակէզս՝ և
 զվասն մեղացն ոչ խնդրեցեր
 (Առա. լթ. 7) : Քանզի ոչ կա-
 րէր արիւն նոխազացն և ցլուց

բառնալ զմեղս ո (Աբբ . Ժ . 4) :

Եայց նորս այս եկեղեցի Վը-
րիստոսի՝ ժողով հաւատացելոց ,
ունի զկատարեալ ներքին սրբու-
թիւն և փրկութիւն ՚ի մեղաց՝
արդեամբ ճշմարիտ պատարագին
անբիծ և անարատ գառին Կոտու-
ծոյ Հիսուսի Վրիստոսի . որ բար-
ձեալ զմեղս աշխարհի պատարա-
գեցաւ ՚ի վերայ խաչին , և ան-
պարտական մահուամբն ազա-
տեաց զմեղ ՚ի սղծութենէ մե-
ղաց՝ սրբեալ արդարացուցիչ ար-
եամբ իւրով , և արար զեկեղեցի
իւր հաղորդս սրբութեան իւրոյ
և արդարութեան . որով ստա-
ցաւ սուրբ եկեղեցին քրիստոնե-
ից զսրբութիւն անմեղութեան
և անարատութեան գառինն Կո-
տուծոյ : « Հաւասիկ գառն Կո-
տուծոյ , որ բառնայ զմեղս աշխար-

Հի (ՀՅՆ . ա . 29) : Արով կամօք
և մեք սրբեցաք ՚ի ձեռն պատա-
րագի մարմնոյն Յիսուսի Քրիս-
տոսի միանդամ (ԱՅԻ . Ժ . 10) :
Երիւնն Յիսուսի որդւոյ նորա
սրբէ զմեղ յամենայն մեզաց ո
(ՀՅՆ . Ա . ԿՊԲ , ա . 7) :

Չորրորդ՝ հին եկեղեցին չու-
ներ հաղորդակցութի ընդ գեր-
բընական յաւիտենական և աս-
տուածային կենդանութե . ըստ
որում տակաւին չէր ՚ի նմա աղ-
բերացեալ և հեղեալ սրբարար
շնորհըն աստուածային , որով և
մարթ լիներ նոցա և հնարաւոր
ստանալ տրամադրութի և պատ-
րաստութիւն առ ընդունակ լի-
նելոյ հոգեւոր և երանական կեն-
դանութեան , զոր օրինակ որպէս
մարմին թափանցիկ՝ որպիսի է օդ ,
ջուր և ասպակի , կարէ ընդունիլ

զլոյս արեւու . և որ ոչ ունի զմա-
 վանցական զօրութիւն՝ իրաւա-
 պէս անընդունակ է լուսոյ . այս
 պէս և աղջն խրայէլի չունելով
 զաւետարանական կատարելու-
 թիւնս և շնորհական օրէնս , որ
 տրամադրէ զմարդ առ գերբնա-
 կան լոյս յաւիտենական կենդա-
 նութեան , զրկեալ էին և անըն-
 դունակ անմահ երանութեան .
 վասն որոյ նմանութեամբ խօսե-
 լով ‘Դաւիթ ցուցաներ զայս պա-
 կասութիւն հին եկեղեցւոյն՝ յո-
 րում էր և ինքն . ‘Ի քէն է տէր
 աղբիւր կենաց և լուսով երեսաց
 քոց տեսանեմք զլոյս ո (Առ-
 լէ . 10) :

Դայց նոր եկեղեցին Վրիսոռ-
 սի հաղորդ գտաւ հոգեւոր ան-
 մահ կենդանութեան աստուա-
 ծային երանութեան , ՚ի ձեռն

շնորհական օրինաց աւետարանական կատարելութեան . զի այն շընորհ սրբարար՝ որ ՚ի ձեռն Յիսուսի ստացաւ , արար ընդունակ և հաղորդ աստուածային գերբնական կենդանութե : Աւստի այժմ տիրապէս և իրաւամբունի եկեղեցին Քրիստոսի՝ ժողովին հաւատացելոց , ՚ի շնորհացըն Քրիստոսի ընկալեալ զհոգեւոր և ղերանաւետ կենդանութիւն . ըստ այնմ , « Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք (Յօհ . Ժդ . 19) : Եւ կեանքը յայտնեցաւ , և տեսաք՝ և վիայեմք՝ և պատմեմք ձեզ զյաւիւտենական կենացն , որ էր առհօր՝ և երեւեցաւ մեզ (Յօհ . Ա. Աւան . առ . 2) :

Հինգերորդ՝ հին եկեղեցւոյ ժողովրդոց միայն ղերիրաւոր բա-

րիս խստանայր ամենաքարին
 Աստուած . վասն զի չունեին զժա-
 ռանդութիւն երկնաւոր բարու-
 թեան . գոլով նոցա տակաւին ՚ի
 վիճակ տարամեք ժութեան յերկ-
 նաւոր անանց և յաւիտենական
 բարեացն և փառաց . ուստի եթէ
 հարկ լիներ Աստուծոյ զարժանա-
 ւոր ոք սպակել բարութեամբ ,
 զերկրաւոր բարիս միայն խոստա-
 նայր , և զանցաւորս և եթ ցուցա-
 ներժառանդել , և զմարմնաւորսն
 և ոչ զհոգեւորսն տալ կամեր նո-
 ցա . վասն որոյ Աբրահամու՝ որ
 արժանի եղեւ սպարդեւս ընդու-
 նիլ յԱստուծոյ սակս բոլորա-
 նուեր հնազանդութեան իւրոյ ,
 տես , զի՞նչ տեսակ սպարդեւոյ
 խոստանայ նմա ԱԾ , «Օրհ-
 նելով օրհնեցից զբեղ , և բազ-
 մացուցանելով բազմացուցից ըզ

զաւակ քո իբրեւ զաստեղո երկ
 նից բազմութեամբ , և իբրեւ
 զաւազ առ ամին ծովու . և ժա-
 ռանդեսցե՛ զաւակ քո զբաղաքս
 հակառակորդաց իւրոց Ա (Օ՞ն.
 իբ . 17) : Այսպէս և նահապե-
 տին Յակոբայ՝ զոր սիրեաց , յորո-
 վայնէ մօրն զնա ընտրեալ , խոս-
 տանայ ՚ի նշան յատուկ սիրե-
 լութեան զմարմնաւոր և զերի-
 բաւոր բարիս . Ա Օ ի զերկիրդ յո-
 րում դուդ ննջեցեր , քեզ տաց
 զգա և զաւակի քում . և եղիցի
 զաւակ քո իբրեւ զաւազ երկրի .
 և ընդարձակեսցի ՚ի ծովակողմն ,
 և ընդ արեւելս , և ընդ հիւսիս ,
 և ընդ հարաւ Ա (Օ՞ն. իբ . 13) :
 Իստ այսմէ և երկրորդ Օրինաց՝
 (Լ . 32) : Օ գոյշլերուք առնե-
 լոյ՝ որպէս պատուիրեաց քեզ տէր
 Աստուած քո . և մի խոտորիցիս

յաջ, և մի յահեակ . ըստ ամենայն ճանապարհին՝ զոր պատռիքեացքեղակը Աստուած մեր գրնալ . զի հանգուացէ զքեղ՝ և բարի արասցէքեղ, և երկայնօրեայք լինիցիք յերկրին զոր ժառանգեցէք ո :


Իսկ նոր եկեղեցւոյս՝ քրիստոնեաց, խոստանայ Յիսուս զերենային և զյաւիտենական բարիս . ոչ զանցաւոր կեանս այս ազցաւոր կենցազայս ցուցանեւ ժառանգել հետեւողաց իւրոյ, այլ լուսով աւետարանական վարդապետութեան իւրոյ՝ առաջնորդէ ՚ի կեանս յաւիտենականս, և այս համարձակութիւնկեղեցւոյ իւրոյ հայցել և ինդրել զերկնից բարութիս և զամենացանկալի վառութբայութել իւրոյ . որովհետեւ քրիստոնեական շնորհ՝ որ յայտ-

նեալ և սփռեալ է՝ ՚ի նորս այս
 առւրբ եկեղեցւով, տայ ամենեւ-
 ցուն աներկը այ յուսով՝ հոգւով
 և սրտիւ խորհիլ և ակնունիլ եւ-
 րանաւետ վայելման երկնից ար-
 քայութե՞ն և աստուածային յա-
 ւիտենականն փառաց : « Ես եմ
 լոյս աշխարհի . որ գայ զենի իմ,
 ընդ խաւար մի գնացէ , այլ ըն-
 կալցի զլոյսն կենաց (ՀՅօհ . ը . 12) :
 Խնդրեցէք նախ զարքայութիւն
 Վասուծոյ և զարդարութիւն նո-
 րա , և այդ ամենայն յաւելցի ձեզ .
 մի այսուհետեւ հոգայցէք վասն
 վաղուին՝ զի վաղիւն վասն իւր
 հոգացի (ՈՒտ . զ . 33) : Քան-
 զի երեւեցաւ շնորհն Վասուծոյ
 վրկիչ ամենայն մարդկան . որ խր-
 բատէ զմեղ՝ զի ուրասցուք զամ-
 բարշտութիւն և զաշխարհական
 ցանկութիւն . զդ աստութեամբ

և արդարութեամբ և աստուածականութիւնը կեցցուք յաշխարհի . և ակնկալցուք երանելիյուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի . Քրիստոսի ո (Տիգ. թ. 11):

Ի՞այ ՚ի սոցունց և զբազումն դտանեմք զանդրժելի ապացոյցս անջրավեառութեան և խորոցի հին եկեղեցւոյ խրայելացւոց ընդնուրոյս սուրբ եկեղեցւոյ քրիստոնեաց . նա միայն զսպագայիցն ուներ զոեսութիւն , իսկ սա ներկայ ունի զանժխտելի ճշմարտութիւն . նա ՚ի յանցաւոր վիճակի դատապարտութեան էր , իսկ սա յարդարացեալ վիճակի փրկութեաց . նա հեռաւոր մնայր յաստուածային գերբնական պարգեւաց և շնորհաց , իսկ սա կարի մերձաւոր դտաւ ամենայնի և

Ժառանգաւոր : Կնքեսցիր առաջ
 նօր բաղդատութիւն մեր բանիւ
 սրբազն առաքելոյն Պօղոսի . Ե-
 թէ « Այսուհետեւ ոչ էք օտարք
 և պանդուխոք . այլ քաղաքակիցք
 սրբոց , և ընտանիք Աստուծոց »
 (Երեմ , է . 19) :



Պ Ե Ա Խ Խ Խ Դ :

Եկեղեցին բաժանի յերիս :

Այսիս՝ ՚ի զինուորեալ. որովհետեւ յերկրի աստ բարսյական մարմին ՚Վրիստասի՝ հաւատացեալք՝ որը անուանին եկեղեցի ՚Վրիստասի, են զինուորեալ հոգեւոր անսպարտելի և ամենազօր զինու աւետարանական նոր օրինաց և որբոյ Հոգւոյն Կստուծոյ շնորհաց, և սոքօք կարողանաց եկեղեցին զօրանալ ընդդեմսատանացական մօլութեանց և մարմնական հեշտութեանց. սոքօք արիանաց յաղթահարել և վարել զարբանեակս սատանայի զյայտնի կամակոր հտկառակողս ընդդեմ բացայսցտ ճշմարտութեան

աւետարանական սրբազնն ըստ
 նից, ակն յանդիման քարձրացու-
 ցեալ զաքանչելի գրոշակ ուղղա-
 փառ քրիստոնէութեան՝ ունելով
 առաջի զամենայաղթ զօրադլուխ
 իւր զտէր Յիսուս. սոքօք հան-
 դիսանայ քաջամարտիկ եկեղեցին
 'ի քարոյական և 'ի հոգեւորական
 պատերազմունո քակելով զամու-
 րլս և կործանելով զամրոցս հո-
 գեկորոյս մոլութեանց, երկրա-
 հակ և մարմնաւոր խորհրդոց և
 չարտչար մոլորութեանց Ճշմար-
 տակորոյս աղանդաւորաց: Եյու
 զինուորութեամբ պաշտղանի ե-
 կեղեցին յամենայն հակառակա-
 մարտից յարձակմանց, և յասկա-
 հովութեան մնայ 'ի Ճշմարիտ և
 յուղղափառ հաւասար քրիստո-
 նէութեան և 'ի սրբազն աս-
 տուածպաշտութեան. և յուսով

մեծաւ տեսանէ զերանական փառաց պատկան հանդերձեալ և պատրաստեալ . սյուտ երաննելին Պօղոսքաջալերեր զեկեղեցին յասելն . « Այսուհետեւ զօրացարուք տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա . և զգեցարուք զըսպառաղինութիւն Կատուծոյ . զի կարող լինիջիք կալընդդէմ հնարից սաստանայի (Եփե . դ . 10) : Օ էն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր . այլ զօրաւոր յԿատուծոյ , առ ՚ի քակելոյ զամուրս և այլն (Բ . Կրն . ժ . 4) :

Երկրորդ՝ բաժանի ՚ի յաղթական . զի հաւասարացեալք մինչյաշխարհի աստ են , իբրեւ զինուոր՝ սպառաղինեալ շնորհիւ Պրիստոսի , և քաջութեամբ վանեալ զամենայն ընդդիմանարտ ախոյեանս սրն հոգւոյ՝ և սրբութեամբ եւ-

լեալ 'ի մորմնոյ , լինին միաւոր-
 եալընդ Քրիստոսի և ընդ հրեշ-
 տակաց 'ի յաղթական անդր յե-
 կեղեցիս անդրանկաց 'ի վերինն
 Արուսաղեմ . ուր և ակնկալեալ
 սպասեն խմանալի տեսութեան
 տստուածայինն փառաց և ընդու-
 նելութեան կատարեալ հասուց-
 ման 'ի հանդերձեալ դատաստա-
 նին՝ նորոգ ամեներջանիկ և ան-
 մահ ծննդեամբ . յարում բաշխիլ
 ունի անաշառապէս պսակ արժա-
 նաւոր , տրիտուր ըստ չափու-
 իւրեանցն առաքինական շահա-
 տակութեանց : Առ այս հրձուա-
 նօք պանծաց սրբազն առաքեա-
 լըն . « Օ բարուոք պատերազմն
 պատերազմեցայ . զընթացսն կա-
 տարեցի , զհաւատսն պահեցի .
 այսուհետեւ կոյ մնայ ինձ ար-
 դարութեան պսակն » (Բ . Տէմ . 7 .)

7) : Ահա այս ժողով երանելեաւ
ցըն է յերկինս՝ որ կոչի յաղթական
եկեղեցի . ուր երանելիք յաղթա-
կան պսակաւ փառաւորեալ՝ միա-
ձայն ընդ բիւրաւոր բանակս հր-
բեշտակաց՝ լինին փառաբանիչք
սուրբ Արքորդութեան և վայե-
լողք փառացնաստուածութեան .
զայսոսիկ ամենայն յայտնի ցուցա-
նեն բանք սրբազան առաքելոյն .
« Այլ մատուցեալ էք ՚ի սիովն
լեառն , և ՚ի քաղաք Անց կեն-
դանւոյ՝ յԱրուսաղէմ յերկինս .
և ՚ի բիւրաւոր բանակս հրեշտա-
կաց . և յեկեղեցիս անդքանիկաց
գրելոց յերկինս , և առ դատաւո-
րըն ամենեցուն Եստուած , և յո-
գիս արդարոց կատարելոց (ԱԲՀ .
ԺԷ . 22) : Եւ սոքա ամենեքին վր-
կայեալք ՚ի հաւատոցն՝ չեւ եւս
ընկալան զաւետիսն . Եստուածոյ

վասն մեր լաւագոյն համարեալ
զի մի առանց մեր կատարեսցին ո
(Եբր . ժամ . 39):

Երրորդ՝ կարեմը զեկեղեցին
բաժանել և 'ի նիւթական . ոչ
իրապէս՝ այլ յարմարութք . զի
չէ սա կաղմեալ 'ի բարոյական
մարմնոյ Քրիստոսի այսինքն 'ի
հաւատացելոց , այլ 'ի փայտէ 'ի
քարէ և 'ի հողայ . ոչ 'ի վերայ առ
տուածաղդեցիկ բանից առաքե-
լոց և մարդարէից հիմնեալ , այլ
'ի վերայ հողայ հաստատեալ և կա-
ռուցեալ . բայց 'ի ձեռն սրբա-
գործ սպաշտամանոյ և սրբոց առա-
քելոց և մարդարէից աստուածա-
հաճոյ բանիցն ընթերցմանոյ և օ-
ծութեամբ սրբարար միւռնի ,
նուիրի տաճար Աստուծոյ փառա-
ւորեալ սրբազն խորհրդոցն մա-
տակարարութեամբ . որոյ օրինակ

Եր տաճարն Ասղոմնի և ոռը
 Սիօն վերնատաւնն . յորում հա-
 մախումք գումարին հաւտա-
 ցեալք յաղօթո և ՚ի միաբանա-
 կան փառաբանութիւնս ամենա-
 կալին Կոտուծոյ . ՚ի յունկնդրու-
 թիւն աւետարանական կենսա-
 ւետ բանին և քրիստոնէական ող-
 ջամիտ վարդապետութեան : ՚ի
 սմա ժողովին քրիստոսամերք ա-
 կընկառոյց անցյադ փախաքմամք ,
 ջերմեռանդն հանդիսիւ տեսա-
 նել զկատարումն որբարար խոր-
 հըրդոյ անմահ պատարագին երկ-
 նաւոր գառին , ՚ի բարձրախոր-
 հուրդ սեղանն որբանուեր . որով
 լինի փրկութիւն մեղաց կենդա-
 նեաց և ննջեցելոց : Ուստի փո-
 խանունաբար առեալ յանուն
 բնակողաց՝ զբնակարանն կոչեմք
 եկեղեցի . բայց միայն որոշեմք

նիւթական անուամբ՝ ՚ի ղինուռ
 բականէն և ՚ի յաղթականէն : Ու-
 նի և այլ զանազան անուանս պան-
 ծալիս, այս նիւթական սուրբ ե-
 կեղեցի . կոչի տուն Աստուծոյ,
 յարկ սրբութե, տեղի փառաբա-
 նութե, բնակարան հրեշտակաց,
 քաւարան մեղօք պարտաւորելոց,
 և սիրաժողով խմբարան կատա-
 րեալ հաւատացելոց : Ըստ հա-
 մարեալ զասացեալս ցայս վայր՝
 ունկնդիցուք աստանօք վկայութեց:
 «Տուն իմ տուն աղօէթից կոչեսցի
 (Վատ. իս. 13) : Նախ՝ յորժամ ՚ի
 մի վայր ժողովնեցիք յեկեղեցին . . .
 Եւ արդ՝ ՚ի ժողովնելն ձեզ ՚ի միա-
 սին, ոչ է տուն տեառն ձեզ տեղի
 հաց ուտելոյ . . . : Ոիթէ տոննս
 ոչ ունիցիք ուտելոյ և ըմակելոյ .
 Եթէ զեկեղեցեան Աջ արհա-
 մարհէք » (Ա. Կող. ժամ. 18) :

ԳԼՈՒԽԵ.

Յաղագս շնորհաց սուրբ Եկեղեցւոյն
Քրիստոսի :

Օ յնուռոքեալ Եկեղեցւոյն Քրիստոսի՝ յաւէտ կարէ սպարծիլ յաստուածային ձրիատաւը սպարդեւս զանազան շնորհաց, որ միշտ յաստուածային մարդասիրական բարերարութեն ծաւալի ՚ի վերայ Եկեղեցւոյն իրրեւ զբաղման ճաճանչ ճառագայթու արեւու . զի նովաւ աճի և զօրանայ Եկեղեցին ՚ի սքանչելի գործս զանազան և բաղմատեսակ առաքինութեն . նովաւ հաստապինդ և անշարժ մնայ ՚ի կոչումն աւետարանական և ՚ի ճշմարիտ հաւատու . նովաւ գտանի հաղորդ Երկնաւոր աս-

տուածային և գերբնական բարեսց և փառաց . և նովաւ յաստուածատեսակ նմանութիւն վերաբարձրառնայ ըստ աստուածաբառանին՝ Կիսնեսիոնի : Աւտի պարտաւորի եկեղեցին ճանաչել զօրիատուք շնորհս Աստուծոյ . և գոհանաւալ զպարդեւողէն գերբնական ձրիցն . որով մեծացեալ և ճոխացեալ գտաւ յաստուածդիւտութիւնս կատարեալ ամենայն մասմբք : « Դոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝ ՚ի վերայ շնորհացն Աստուծոյ , որ տուեալ են ձեզ ՚ի ՚Քրիստոս Յիսուս . զի յամենայնի մեծացարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ և ամենայն գիտութեամբ » (Ա. Արք. ամ . 4) :

Այս շնորհաց և աստուածա-

յին սրարգեւաց յայտնութիւն՝
 նորագիչ է հոգւոց, և լուսաւո-
 րիչ մտաց. հալածիչ մեղաց, և
 մաքրիչ խղճի մտաց. յայտնիչ ու-
 նայնութեան կենցաղոյս, և երե-
 ւեցուցիչ յաւիտենական փա-
 ռաց. 'ի սմա՝ քաջալերին առա-
 քինիք անխոնջ յառաւելն փու-
 թալ 'ի յառաջադիմութիս երկ-
 նաբերձ առաքինութեանց. և 'ի
 սմա լուսաւորեալ մտօք՝ բացէ 'ի
 բաց մերժեն զմոլորութիւնս և
 զհետ լինին ճանապարհացն ար-
 դարութե : Առվաւ Աօղոսն՝ Պօ-
 զոս անուանեցաւ, և հալածին
 եկեղեցւոյն՝ Քրիստոսի՝ սքանչելի
 քարողիչ բանին կենաց. սովաւ
 լքեալ թողին զհեշտութիւնս աշ-
 խարհի մաքսաւորք և մեղաւորք,
 և խաչաբարձ հետեւեցան՝ Քրիս-
 տոսի, սովաւ զօրացան գունդք

մարտիրոսաց հեղուլ զարիւնս իւ-
րեանց . սովաւ գրին անուանք
խոստովանողաց յերկինս 'ի դըպ-
րութեան կենաց : Եւ յաղագո
այսր պարգեւաց մարդասիրական
բարերարութեանցն Աստուծոյ,
լուր վկայութեանցու «Օ ի շնոր-
հօք նորա էք փրկեալք 'ի ձեռն
հաւատոց . և այս ոչ 'ի ձեհջ այլ
Աստուծոյ պարգեւ է . ոչ 'ի դոր-
ծոց՝ զի մի ոք պարծեացի (Երկեւ .
բ . 8) : Այլ յորժամ կամեցաւ
Աստուծո , որոշեաց զիս յորովայ-
նե մօր իմոյ , և կոչեաց 'ի ձեռն
շնորհաց իւրոցո (Գալ . առ . 15) :

Ապաքէն ընդ վայր բարբան-
ջել ժսլրհեցան մոլորական բա-
նիւք իւրեանց Պեղագեանք և
Կիսապեղագեանք , որք զմոլորա-
շաւիղ կարծիս իւրեանց համա-
րէին հաստատել եթէ լոկ բնաւ

կան զօրութեամբ և ոչ շնորհօք
 Աստուծոյ յաջողի մարդկան գալ
 ՚ի հաւատո , և բարւոք շարժիլ
 կամաց յաստուածպաշտութիս ,
 և յառաջանալ ՚ի գործս բարու-
 թեան . որոց ընդդեմ ելեալ զօ-
 րաւոր բանիւք աւետարանական
 ճշմարտութեան սրբազան վար-
 դապետք եկեղեցւոյ՝ ըմբերա-
 նեալ յաղթեցին նոցա . և զմոլո-
 րութիս նոցին հերքեցին յեկե-
 ղեցւոյն ՚Քրիստոսի , հաստատե-
 լով՝ եթէ անբաւական և անզօր
 է մարդ՝ ինքնին իւրով ուշիմու-
 թեամբ խորհիլ զաստուածային
 և զբարեվախճան ինչ առանց բա-
 ւական շնորհացն Աստուծոյ . ար-
 դեամբք իսկ ցուցանելով յայտ-
 նապես զՃշմարտութիւնո բանից
 աւետարանական և առաքելական
 վարդապետութեան . զորս ահա-

ւասիկ և մեզ է տեսանել զսակաւս ՚ի բաղմաց աստանօր : « Եռուանց իմ ոչինչ կարեք առնել (Հօն . ԺԵ . 5) : Եթրեւ ոչ եթե անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրեւ ՚ի մէնջ , այլ բաւականութիւն մեր յի ստուծոյ է (Բ. Լորն . դ . 5) : Երանի քեզ Այսոն որդի Հօնանու . զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ չայլ իմ որ յերկինս է ո (Այսպ . ԺՂ . 17) :



Գ. Ե. Ա. Խ. Խ. Օ.

Յաղագս սահմանի շնորհաց :

Ընորհն համառ օտիւ սահմանի ըստ ածաբանից՝ «Վերը ընական պարզեւ Աստուծոյ, ձրբիալիս տուեալ բանական ըստեղծուածոց իւրոց, յաղադսյաւիսնական փրկութեան ՚ի ձեւուցն արդեանցն Քրիստոսի » :

«Վերը նական ասելով, որոշեցաւ ՚ի բնական պարզեւացն Աստուծոյ, որալիսի է արարչագործութիւնն՝ որով հաստեալ զամենայն բնական և զգալի բարիս իրեւ պարզեւոս արտաքին վայելչութե՝ շնորհեաց բանական ըստեղծուածոց առ ՚ի ողետա կենցաղավարութեան իւրեանց . զորս

վայելեալ գոհասցին զարարչէն ա-
 մենեցուն : Այնպիսի է խնամք և
 ոլահպանութիւն , և աղդի աղդի
 բնական ձիրք հոգւոյ և մարմնոյ .
 զի միտք և կամք , աստուածային
 ձիրք են հոգւոյն և ներդործու-
 թիւն նորին է զգալ , մտածել ,
 ճանաչել , յիշել , կամիլ , և գոր-
 ծել . և գերագոյն քան զայսոսիկ
 է ձիրն անմահութեան : Այնպէս
 և ՚ի մարմնի է տեսանել դյատուկ
 ձիրս , որ է ու զզարերձ հաստիլին
 վայելըութի , զգայարանայն աղ-
 նուական իմն յարմարադրութի ,
 որով գեղեցիկս հանդիսանայ ա-
 ռաւել քան զամենայն կենդա-
 նիս : Ես սոցին սակի են և այլ ա-
 մենայն բնական բարիք խնամոցն
 Վասուծոյ , որ և ասին շնորհք
 տիրապէս , կամձրի պարգեւք Վա-
 տուծոյ , որ հասարակ է բարեաց

և չարեաց : Իսկ յաստուածաբան
նից գերբնական շնորհք ասի ա-
ռատարար այն ամենայն ձրի պար-
գեւն Ծոտուծոյ , որ ՚ի վեր է քան
զամենայն կարդս բնութեան :

“Ձրի տուեալ ասելով յայտ-
նի լինի , զի որպէս բնութիւնն
ձրիապէս պարգեւեցաւ իւրաքան-
չիւր անձանց խնամօք արարչին ,
ըստ այնմ , “Աս արար զմեղ և ոչ
մեք էաք” (Առաջ . զիժ . 3) , նոյն-
պէս և շնորհք նորա է միշտ ձրի
մատակարարեալ մեղ ՚ի բարերա-
րութենել նորին և ոչ արգեանց
մերոց ստացուած :


“Խանական ստեղծուածոց ո
ասելով՝ յայտնի եղեւ եթէ ոչ ա-
մենայն էակ է ընդունակ շնորհա-
ցըս , այլ միայն բանականք՝ որոց
հոգիք են անմահ , և ճոխացեալ
զարդարեալ մոօք և կամօք . որով

կարողանան ճանաչել և ընտրել
 զգերագոյն յարգ շնորհաց , և
 փախադանօք յարիլ 'ի նա՝ և յար-
 գանօք գանձել զնա և պահել իր-
 բեւ իսկական միջոց հասուցա-
 նող առ երանաւէտ վախճան իւր-
 եանց , և իրբեւ երկնարքերձ սան-
 դուղք յաւիտենական կենաց . ո-
 րով լինի հասանիլ 'ի փառս երկ-
 նից արքայութեան . վասն որոյ ա-
 սացաւ «յաղագս յաւիտենական
 փրկութե՞» : Այս ամենայն սահ-
 ման հայի առանձինն միայն առ-
 ղեղումն գերբնական շնորհացին ,
 որ առաջնորդէ 'ի յաւիտենական
 փառս . առ այս վայելչանան բան-
 քըս վկայութեանց : «Օ ի արդա-
 րացեալք շնորհօքն՝ եղիցուք ժա-
 ռանգաւորք յուսով կենացն յա-
 ւիտենականաց (Տիտ . դ . 7) : Եւ
 Կառուած ամենայն շնորհաց՝ որ

կոչեաց զձեղ յիւրյաւ խոենական
փառսն , չիսուսիւ Քրիստոսիւ ո
(Պիլք . Ա . Լամբա . Ե . 10) :

Եպաքէն այսր գերբնական
սպարգեւաց ձրիական շնորհաց ,
մերձաւոր և ընդունակ եղեւ ե-
կեղեցին ՚ի ձեռն բազմաւեսակ
արդեանց սրանչելի մարդեղու-
թեանն Քրիստոսի . վասն որոյ ՚ի
սահմանն յարեցաւ , « ՚ի ձեռն ար-
դեանցն Քրիստոսի » . ըստ որում
Քրիստոս բացարձակ և ընդհա-
նուր գլուխ է եկեղեցւոյն , և ե-
կեղեցին բարոյական մարմին է նո-
րա . ապա տիրապէս հոսէ զհան-
րական շնորհս իբրեւ գլուխ յան-
դամն իւր . վասն որոյ եկեղեցին ,
կամ ժողով հաւատացելոյ , պար-
աին ճանաչել , եթէ զեղմունք և
լիութիւն շնորհաց են գործ և
պատղ հրաշազարդ մարդեղու-

թեան կենարարին մերոյ Յիսուսի . և նա է սկզբնական պատճառը շնորհաց և փառաց մերոց : « Ելքութենել անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց . . . : » Նորհք և ձշմարտութի՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն (Յօհ. առ. 16) : Օ, ի՞նմա բնակել ամենայն լոռմն աստուածութեան մարմնապէս . և էք դուք նովաւ լցեալք , որ է դլուխ ամենայն իշխանութեան և պետութեան ո (Առջը . է . 9) :



ԳԼՈՒԽ Ե:

Յաղագո բաժանման շնորհացն :

Ընորհքն բաժանի պարզա-
 պէս՝ նախ յարտաքին և 'ի ներ-
 քին։ Երտաքին շնորհքն է ձրիւ-
 կան բարեգթութեանն Եստու-
 ծոյ և գերբնական նախախնամու-
 թեանն գործ զարմանալի . որոյ
 ստացողք բարոյապէս և արտա-
 քուստ բացայսյուցուցանեն զար-
 դիւնս նորին՝ իրբեւ ծառ ինչ
 տնկեալ և արմատացեալ 'ի գնացս
 ջուրց, որ 'ի ժամու պաղաքերս
 երեւեալ վայելչանաց . որպիսիք
 են՝ համբերողք արիաբար բաղ-
 մազան և մեծամեծ վշտաց՝ փոր-
 ձութեանց՝ և հալածանաց . նը-
 պաստամատացք և ողորմածք առ-

անօդնական կարօտեալս , եւս և
 գոհաբանք ՚ի վիճակի չքաւորու-
 թեան՝ իբրեւ առասութեամբ
 բարեաց լիացեալս : ՞ Այսպիսի
 արտաքին աստուածային շնորհա-
 ցըն արդիւնս գործոց և առաքի-
 նութեան՝ եցոյց եկեղեցին մա-
 կեդովիացւոց , այսինքն հաւա-
 տացեալք ՚ի Վակեդովիա . զորոց
 բարեպաշտութեանն զգործս գո-
 վասանական բանիւ հրատարակէ-
 սրբազն առաքեալն Պօղոս՝ շնոր-
 հըս կոչելով զառաքինութիւնս
 նոցին , զպատճառն փոխանակ
 գործոյն առեալ : “ Հուցանեմ
 ձեզ եղբարք դշնորհսն Վստուծոյ ,
 որ տուեալ են եկեղեցեացն մա-
 կեդովիացւոց . զի մեծաւ հան-
 գիսիւ նեղութեան՝ առաւելու-
 թիւն խնդութեանն նոցա , և
 ծանր աղքատութիւն նոցա՝ ա-

ուաւել եղեւ ՚ի մեծութիւն աւ
ուասութենոցա» (Բ. Արք. ը. 1)։

Արտաքին շնորհ աստուածաւ
յին և սքանչելի մարդասիրուեն
յայտնեցաւ ազգի մարդկան,
մարդեղութիւն կենարարին մերոյ
Յիսուսի . արդարեւ շնորհ մեծ
սլարդեւեցաւ յայտ յանդիման
աշխարհի ՚ի ծնանելն ՚ի սուրբ
կուսէն, ՚ի կոչիլն որդի մարդոյ,
և գառն Կատուծոյ բարձող մեղաց
աշխարհի. ՚ի սքանչելի հրաշագոր-
ծութիւնս և ՚ի կենսասու վար-
դապետութիւնս . ՚ի կամաւոր
չարչարանսն և ՚ի փրկարար խաւ-
չելութիւնն . յամենազօր յարու-
թիւնն, և ՚ի մեծահանդէս ինք-
նիշխան համբարձումն : Ի լիու-
թեանց այսր արտաքին շնորհաւ
բաշխութեան Յիսուսի փրկչին
մերոյ՝ յաջողեցաւ և մեզ վերա-

ծիլ՝ ի մահուանե՝ ՚ի կեանս, ՚ի վի-
ճակէ դատապարտութ՝ ՚ի վիճակ
փրկութ. յանարգութենե՝ մեղաց՝
՚ի ժառանգութի աստուածային
փառաց : Օ այս ցուցանեն յայտ-
նի բանքս վկայութեանց : « Եւ
բանն մարմին եղեւ՝ և բնակեցաւ
՚ի մեղ . և տեսաք զփառս նորա՝
զփառս իբրեւ զմիածնի առ ՚ի հօ-
րէ՝ լի շնորհօք և ճշմարտութի .
(Ծօհ. ա. 14), « Բանզի երեւեցաւ
շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն
մարդկան » (Տիգու. թ. 11) .

Աերբին շնորհքն է ձիբբ աստ-
ուածային գերբնական սրարգե-
ւաց՝ շարժիչ և զօրացուցիչ կտ-
մաց և յօժարութե՝ ՚ի ներբուստ,
որով յաջողի գործն յարդարու-
թիւն և յուղղութիւն , և խու-
փանին արդելք բարեվախճան
դիտաւ օրութեանց . որով ամե-

նայն ոք սեպհականէ արդեամբ
 զիրկութիւն հոգւոյ և զփառու
 երկնից : Աշ ահա այս անպարտե-
 լի զօրութի՝ էր պարդեւ որբոյ
 հոգւոյն Աստուծոյ . զոր խոստա-
 նայր Հիսուս առաքելոց իւրոց
 'ի բարձանց անտի հեղուլ 'ի նո-
 սա՝ առ ՚ի կացուցանել զնոսա
 անվանելի յամենայն հակառա-
 կութեանց և 'ի թշնամեաց : « Աշ
 ահա ես առաքեմ զաւետիս հօր
 իմոյ 'ի ձեզ , և դուք նատարուք
 յիշուսաղեմ մինչեւ զգենու-
 ցուք զզօրութիւն 'ի բարձանց
 (Պատմ . իու . 45) : Համենայնի կա-
 րող եմ , այնու՝ ոք զօրացոցն
 զիսոյ (Փիլքու . դ . 13) :



ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս բաժանման ներքին շնորհաց :

“Ներքին շնորհն բաժանի ՚ի
ներդործական , ՚ի սրբարար , ՚ի
ձրիատուր և ՚ի գործադիր :

“Ներդործական ո շնորհն է՝
լոյս իմն գերբնական ծագեալ
յաստուածային անսահման բա-
րութենե անտի , և ներդործեալ
՚ի հողիս . սմա է տիրապես շար-
ժելգերբնական ունակութեամբ
զբնդունողս ՚ի ճանաչումն ճշմար-
տութեան , որով անխափան դի-
մեց յաստուածաբանական առա-
քինութիւնո , այսինքն ՚ի յուղ-
ղափառ հաւատս քրիստոնեու-
թեան , յաներկբայելի յոյս խոս-
տացեալ երկնաւոր բարեաց և ՚ի

կատարեալ սէրն՝ ՚ի նուիրելին առ
Վստուած և առ ընկերն . առ Վս-
տուած՝ իրբեւ առ ծայրագոյն
բարին . և առ ընկերն՝ իրբեւ առ
պատկերակիցս Վստուածոյ :

Վյսու ներգործական շնոր-
հիւ դիւրըմբոնելի լինին մոտաց ,
ամենայն գերբնական ուսմունք .
սովխաւ յաջողի ինքնայօժար բերիլ
կամոց յանձնանուեր ծառ այու-
թիւն աստուածային անժխտելի
հրամանաց . առ որ վերածին այ-
սոքիկ բանք վկայութեց : « Վըր-
եալ է ՚ի մարդարես , և եղիցին
ամենեքեան ուսեալք Վստուածոյ .
ամենայն որ լսէ ՚ի հօրէ և ուսա-
նի , գայ առիս (Քօհ . զ . 45) :
Իսկ միսիթարիչն Հոգին սուրբ ,
զոր առաքեսցէ Հայր յանուն իմ ,
նա ուսուսցէ ձեզ զամենայն . և
յիշեցուսցէ զամենայն՝ զոր ինչ

ասացի ձեզ (Յօհ . ԺՂ . 26) :
 Եմն ոմն անուն | իդիա ծիրանա-
 վաճառ՝ ՚ի թիւատիր քաղաքէ՝
 երկիւղած լուսուծոյ՝ լուաւ . զո-
 րոյ Տէր իսկ երաց զսիրտ անսալ
 խոսիցն Պօղոսի ո (Կարծ . ԺՂ ,
 14) :

“Արքարար ո շնորհն է՝ գեր-
 բընական ընդունակութիւն հե-
 ղեալ և ծաւալեալ ՚ի հոգիս հա-
 ւատացելոց՝ և մերձաւորելոց ՚ի
 սրբարար և արդարացուցիչ խոր-
 հուրդս ապաշխարութե՛, և հա-
 զորդութե՛ մարմնոյ և արեան կե-
 նարարին մերոյ ՀՅնի . որով լինի
 հողեղէն ընութե՛ս հաղորդիլ աս-
 տուածեղէն անեղ և ամենակա-
 տար ընութեանն : Լյա սրբարար
 հեղումն շնորհաց ՚ի մարդասիրա-
 կան գթութենէն լուսուծոյ առ
 հոգիս մեր , կացուցանէ զմեղ ժա-

ուանդս յաւիտենական երանու-
թեան, և ժառանդակիցս Քի-
սուսի Քրիստոսի Տեառն մերոյ .
առ այս յարմարին բանքս. և Հայր՝
զորս ետուրն ինձ , կամիմ՝ զի
ուր եսն եմ, և նորա իցեն ընդ
իս . զի տեսանիցեն զիտոս իմ՝
զոր ետուրն ցիս (Քօհ . ԺԵ . 24) :
Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք՝ որ
պէս և նա ՚ի լոյս է , հաղորդու-
թիւն ունիմք ընդ միմեանս . և
արիւնն Քիսուսի որդւոյ նորա
որբէ զմեղ յամենայն մեղաց (Քօհ .
Ա . Լուն . ան . 7) : Որ փրկեացն
զմեղ , և կոչեաց զմեղ ՚ի կոչումն
սուրբ . ոչ ըստ գործոյ մերոց՝
այլ ըստ իւրում յառաջադրու-
թեանն և շնորհաց՝ որ տուաւ
մեղ ՚ի Քրիստոս Քիսուս յա-
ռից (Բ . Տիմոթ . ան . 9) :

« Ճրիատուր ո շնորհքն է պար-
 գեւ գերբնական տուեալ յԱ-
 տուծոյյամենախնամբարեգթու-
 թենէն , առ ՚ի անօրինել նովաւ
 զիրկութիւն այլոց . վասն որոյ ՚ի
 ձեռն ստացողի ճրիատուր շնոր-
 հացա՝ տիրանդսյաջողիբաղմաշահ
 օդուտ հոգեւոր բարեաց և ա-
 ռաբինուեց բաղմաց ունկնդրաց
 և հետեւողաց ողջամիտ վարդա-
 պետութեց հոգեւոր և բարոյա-
 կան խրատուց շնորհազարդելոցն։
 Եւ յոլովք ՚ի պարդեւացս շնոր-
 հեցան յաւետ առաքելոց և ա-
 ռաքելաշնորհ վարդապետաց և
 աստուածազան արանց սրբոց ,
 հոգեւոր հովուաց և բարեջան
 ուսուցչաց . և այս ճրիատուր շը-
 նորհ ունի զզանազան բաժան-
 մունս որոշելոց պաշտամանց ըս-
 տացողաց նորին , որպէս զծառ

ինչ բազմաձիւղ ուռաճացեալ և
սպարարտացեալ . զորյայտնի ցու-
ցանէ սրբազան առաքեալն :
« Յօհապէտ և բաժինք շնորհաց
են , այլ հոգի նոյն է . եթէ բա-
ժինք սպաշտամանց են , այլ Տէր
նոյն է . եթէ բաժինք յաջողու-
թեանց են , այլ Կոտուած նոյն
է , որ յաջողէ զամենայն յամենայ-
նի . բայց իւրաքանչիւր ումեք
տուեալ է յայտնութիւն հոգ-
ւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ ո
հայլն (Ա. Արք . Ժը . 4) :

Ի միոյ հոգւոյ զեղանի այս
յոդնատեսակ ձրիապարգեւ շր-
նորհ . ըստ արժանաւորութեան
և զօրութեան առողին՝ վասն հա-
սարակաց օգտի և 'ի սրայծառու-
թիւն եկեղեցւոյ . յաղագս որոյ
իւրաքանչիւր ընդունօղք 'ի շնոր-
հացս՝ իբրեւ ղհաւատարիմ հա-

զարապետս և բարւոք պաշտօնեայս զանազան շնորհացն Առտուծոյ, պարտին մատակարարել զնոյն ՚ի փառս Աստուծոյ և ՚ի շահ ընկերին. զի այն է կամք մարդասէր պարզեւողին: Ուստի սրբազան առաքեալն Պետրոս բացայաց յորդորէ զամենայն շնորհընկալս, չզանալ զնոյն յեղբարց իւրոց, այլ աննախանձնուիրել կարօսելոց, որպէս և պահանջէ ուղիղ կանոն եղբայրախրութեան և մարդասիրութեան: « Իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ, զնոյն մատակարարել իրեւ զբարւոք հաղորապետս պէսպէս շնորհացն Առտուծոյ » (ՊԵ. Ա. Կաթոռ. գ. 10):

« Պործադիր շնորհքն է՝ օժանդակիչ և զօրացուցիչ տկարագոյն և վայրահակ բնութեան մե-

բում՝ առ անդանդաղեւ անխորշ
 հետեւիլ բարեսիրութեան, և 'ի
 բաց մերժել զչարութիւն. կոչի
 սա և շնօրհք հաճոյաբար. ըստ
 որում զատացողին շարժէ զկամս
 'ի բարին, և ուղղէ զվարս և առնե
 աստուածահաճոյս։ Այս տայ մը
 տաց խորհիլ զհաճոյս Կատուծոյ
 և փութացուցանե արիանալ 'ի
 սլեսսպէս առաքինութիւնս և դոր-
 ծովյայտնել զյարդ նորին։ Այ
 է իբր անդեղայ թունից մեղաց,
 սա՝ որպէս փող աւագափող զար-
 թուցիչ է խղճի մտաց որոշելը
 բարին 'ի չարէն, զՃշմարտու-
 թիւնն 'ի ստութենէ. և յարդա-
 րէ զընդունողն լինել Ճշմարտա-
 սէր և բարեգործ. սովաւ դան-
 ձին 'ի հոգին ամենայն տեսակք
 առաքինական և բարոյական փար-
 թամութեանց։ « Ոչ կարէ մարդ

առնել յանձնել և ոչ ինչ, եթէ
ոչ իցէ տուեալ նմա յերկնից ՚ի
վերսւստ (ՀՅԱԼ . դ . 27) : Օ, ի
որք մարմնովնեն, Վատուծոյ հա-
ճոյ լինել ոչ կարեն, բայց դուք
ոչ եք մարմնով՝ այլ հոգւով, եւ
թէ իցէ Հոգին Վատուծոյ ՚ի ձեզ
ընակեալո (ՀՅԱԼ . ը . 8) :

Հայեաց յերկինս . կարես թը-
ւել արդեօք զաստեղս , նոյնպէս
ե զԱտուծոյ շնորհացն տեսակս .
ահա այս ամենայն բազմատեսակ
շնորհօքն Վատուծոյ կարողանամք
դործել զբարին և հասանիլ ՚ի
կեանս և ՚ի փառայաւիտնական
երանութեան :



ԳԼՈՒԽ թ

Յաղաց զբաց քննէ ի շարհ Առաջ.

Աստուած մարդատեր և ա-
մենաբարին կամի, զի ամենայն
մարդիկ կեցցեն ՚ի յաւիտենական
իւանս, և կացցեն հաստատուն
՚ի դիտութիւն ճշմարտութեան.
և լիցին հազորդ և ժառանգ բա-
րութեան և փառաւորութեան
իւրում. ուստի ոչ յաւմերէ
զլանայ զշնորհ իւր, և ոչ երբէք
պակասի ՚ի պարուեւելոց զնոյն;
իսպաց բազում անդամ մարդիկ
պակասին յաստաւածային և ձը-
րիական շնորհաց անօտի. դնելով
արդելս զանհոգութիւն և զա-
րութիւն կամաց հակառակ աստ-
ուածային անշափ և ամենաբա-

ւական առատաձեռնութեանն :
 Աքեւու է գործ՝ լուսաւոր առնել
 զամենեսին . իսկ որ փակէ, զպա-
 տուհանս ընդդէմ լուսոյ նորին,
 հարկաւ զրկի յաշխարհածաւալ
 լուսատիիւռ ճառագայթից նո-
 րին : Աղա ոչ ինչ կարող է զրկել
 զմեղ յաստուածային զանազան
 շնորհացն , բայց եթէ թիւր և
 մոլար գնացք մեր և չարախոտա-
 վաս վարք :

Աստուած անհատահոս աղ-
 բիւր է բազմազեղ շնորհաց , ըզ
 կարօտեալսն կոչէ առ ինքն ասե-
 լով . “ Եթէ ոք ծարաւի իցէ , ե-
 կեսցէ առ իս և արբցէ ” (ՀՅՈՒ .
 է . 37) : Աղա պարտ է մեղ առանց
 ծուլութէ և պղերդութէ մատ-
 չիլ առ աղբիւրն շնորհահոս , և
 ընդունիլ անտի զպարգեւոն զայն
 ձրիատուր և կարեւոր փրկութէ

մերում։ Անընդունակ է ասու
 ուածային շնորհաց սիրտ լիա-
 ցեալ աշխարհային սիրով և երկ-
 րաւոր ցանկութեամբ, իբրեւ
 անօթ ինչ զեղուն՝ յորում չէ
 հնար լնուլ այլ ևս դանապակ ինչ
 ըմսկելի պատուական։ Կատա հեղ
 յանօթայ սրակ քումմե զնոտի
 հեշտութիւնս աշխարհասիրու-
 թեան, զի ընկալցիս զլիութիւնս
 շնորհաց, և լիցի սիրտ քո անօթ
 ընտիր և ընդունարան պիտանի
 երկնաւոր բարեաց։ Յօժարա-
 փոյթ և պատրաստ է ծայրագոյն
 բարութիւնն Կտոռածոյ առա-
 տաձեռնել մեզ զկարեւոր բարիս
 մեր և լիացուցանել արտաքին և
 ներքին պարգեւօք. բայց խնդրէ
 'ի մէնջ միայն զհետեւութիւն
 կամաց մերոց 'ի բարին, 'ի բաց
 մերժել զբնդունայն սիտիանը

աշխարհի , և դշտը խորհուրդս ՚ի
 մտաց , անքոնադատանձիշխանա-
 կան կարսղութեամբ մերով . զի
 ըստ Աիրաքայ (ԺԷ . 6 .) Վաս-
 տած , որ ստեղծ զմեղ՝ ելից ըդ
 սիրու մեր զգօնութեամբ . և ՚ի
 ձեռս անձնիշխան զօրութեան
 մերում յանձնեաց ընտրելազար
 կամօք զբարին ՚ի չարէն , զլոյն
 ՚ի խաւարէն այլովքն հանդերձ :
 Յժողում ասել զբնական օրինաց ,
 որ ներբին ազդեցութիւն վարդա-
 պետէ յօժարութեամբ սրաի քո՝
 վիայութեամբ մտաց քոյ (ՀԱՅ.
 Է . 15) . ընտրել զաւն ՚ի վաս-
 թարէն և զուղիղ ճանապարհն
 փրկութեան ՚ի մոլար գնացից
 կորստեան . և խրատէ , զի զոր ոչ
 կամիտ դու՝ եթէ այլք արացեն
 քեզ , և դու մի զնոյն յօժարէս
 ցիս տոնել այլոց : Եթէ ճանա-

չես զալատիւ և զանարդանա քո ,
չյօժարիս անարդիլ , և խնդրես
զալատիւ քո . ապա կարես ընտ-
րել զբարին և առել զարն . հե-
ռանալ 'ի մոլութեանց՝ և փարիլ
զառաքինութեամբ . որով լինիս
պատրաստեալ առ ընդունելու-
թիւն աստուածային ձրիասլար-
դեւ շնորհաց :

Յառացելոցս աստի կամիմ
հետեւեցուցանել , եթէ ամենա-
բարի բնութիւնն կամի առատա-
ձեռնել 'ի քեզ զոլեսպես բարիս
երկնաձիր շնորհաց իւրոց . բայց
կամի՝ զի և գու ազատ կամօք
քովք ընթացակից լիցիս մարդա-
սէր և բարեբար կամաց իւրոց :
Եւ այս օրինակաւ յորդորէ ըդ-
մեղ լուսաւոր մեկնիչն մարդարէ-
ութեան կասայեաց , Գեղորդ շնոր-
հապերճ վարդապետն մեր , 'իմեկ-

նութեան անդ յասելի . « Օքր
 օրինակ չէ հնար լուսոյ լուսաւո-
 րել զաշս , եթէ ոչ նախ աչքն ա-
 ռաղջ իցեն . նոյնալէս և Կտուծոյ
 խնամքն ոչ ճանաչի մեղ , եթէ ոչ
 միտքն ՚ի ներքս առողջ իցեն մեղ » :
 Կտա մի լիցի քեզ յետսամտու-
 թեամբ զաշխարհայնովքս զբա-
 զիլ , և սնոտի պատճառ անօք ծու-
 լանալ յառաքինական գործոց , և
 պակասիլ ՚ի բարի դիտաւորու-
 թեանց և յաստուածահաճոյ ա-
 ռաջարկութեանց : « Օանիր ըզ
 վայրկեանն , ծանիր և զյաւիտե-
 նականն . տտացիր զփոյթ և զջան
 առ հոգւոյդ փրկութիւն . հե-
 ռացիր ՚ի խարուսիկ հրճուանաց
 տղաւոր և սնոտի կենցաղոյս :
 « Իառնասցին քեզ մարմնական
 հեշտութիւնք , և քաղցրասցին
 հոգեւորական խորհրդածութիք .

և յայնժամ ուղիսօրէն հոսեացին
 'ի հոգիդ յառատաբուղիս աղըե-
 րէն կենաց՝ յորդութիւնք շնոր-
 հաց . յորմէ բողբոջին բեղմնաւոր
 ոստք առաքինութեանց ընծայել
 զհոգեւորական պտուղս անմահ
 կենդանութե : Համարձակեաց՝
 վստահ լեր 'ի քո բարեսրտութի
 և յառաքինասէր յօժարութիւն .
 և մի երկրայիր անշուշտ ստանալ
 զշնորհս փրկութեան և երանու-
 թեան յանսահման մեծութենէն
 Վստուծոյ :

Օգոյշ լեր չմնալ յետա՝ յա-
 ռատաձեռն բարերարութեանց
 անտի Վտուծոյ . զգոյշ լեր չար-
 դելուլ և չմերժել 'ի քէն զերկ-
 նաձիր զանսազառելի և զհոգեշահ
 գանձուցն զստացումն, անհոգու-
 թեամբ քով և կամազաշութիք .
 գրեա՛ զայս տառուածարանական

առած ՚ի միտու քո, եթէ սԱր յու
 չեից արար զքեղ առանց քեզ, ոչ
 փրկեացէ արդ և զքեղ՝ առանց
 քեզ ։ Արդիւնաւորի անձն և
 ընդունի զայս երկնային պարդի
 ձրիական, եթէ ունիցի զքարի
 կամս ընթացակից անդանդաղ
 հետեւող այնր շնորհաց ։ Յօրի-
 նակաց աստի սրբազան գրոց յայտ-
 նի լինին ասացուածք մեր ։ Կա-
 մեցաւ Աստուած ապրեցուցա-
 նել զ'Ար հանդերձ ընտանեօք
 իւրովք ՚ի համաշխարհական ջրհե-
 ղեղէն ։ բայց հրամայէ նմա ձե-
 ռօք իւրովք աշխատ լինել ՚ի մե-
 ծագործ շինուած տապանին ՚ի
 փրկութիւն անձին իւրում (Օհ.
 դ. 14) ։ Կոմի սրբել զ'Ահեման
 ՚ի սաստիկ բորստութենէն ՚ի ձե-
 ռըն մարդարէին Եղիսէի ։ բայց
 հրամայէ, զի և նա երթիցէ և

լուասցի ՚ի Յորդանան եօթն անզ
գամ (Դ. թագ, Ե. 10)։ Ամենա-
փրքիլիչն Հյուտւու մարդաբիրական
և բարեխնամ կամօք յօժարեցաւ
բանալ զաչս ՚ի ծնէ կուրին . բայց
հրամայէ , զի և ինքն երթիցէ և
լուասցէ զաչս իւր յաւազանին
Աելովմայ , առ ՚ի աշխատ լինել
և նմա առ լուսաւորութիւն ա-
չաց իւրոց (Յու. թ. 7)։

Արժան է՝ և հարկ ՚ի վերայ
կաց ամենայն վասիաքողաց առ-
տուածային շնորհաց , ճանաչել
եթէ իւր իւրիք և կամ որո՞վ միջու-
ցու կարէ հետեւիլ շնորհացն .
և ապահովիլ ՚ի միտս , եթէ ար-
ժանի է և ընդունակ երկնազեղ
զարդեւացն . վասն որոյ շնորհա-
ռենչ անձանց պարտ է զգուշու-
թեամբ սեպհականել յանձին
զայտոսիկ աստուածահամայ բա-

ըեկրթութեան զհոգեւոր ունակութիւնս . այսինքն զսէր եւանդնոտ ունիլ առ Աստուած՚ի բոլոր սրանք և յամենայն մտաց՝ հանդերձ պատուիրանապահութեամբ (Յով. Ժդ. 23) : Այն պէս արդիւնաւոր և ճշմարիտ եղբայրակիրութեամբ զհետ լինելաննախանձ բարեաց ՚ի շահ եղբօրն և ընկերին (Յով. ԺԵ. 17) : Հոգեսիրութեամբ չհաճիլ ընդանցաւոր և ունայն հեշտութիւնը աշխարհիս . և փութով պաշխարութեան ՚ի բաց վանել զբոնութիւնս մեղաց , և հեզութեամբ սրաի և բարեպաշտիկ դիտաւորութեամբ մտաց՝ խորհիլ , տենչալ և փափաքիլ աստուածային շնորհաց և փառաց (Հով. ը. 17) :

Պարտ է ուրեմն արթուն մը

տօք յայսոսիկ յառաքինութիւնս
 անդրդուելի հաստատիլ, անցագ
 վափաքանօք յարիլ ՚ի սոսա, և
 սրտաբորբոք վառիլ ՚ի սէր սոցին.
 որովք լինի ստացումն ընդունա-
 կութեան շնորհաց . և ընդունա-
 կութեամբն յաջողի լիանալ երկ-
 նահոսան բարեօք և ձրիական
 պարզեւօք աստուածային առա-
 տաձեռնութեանն . և լիութին
 յաճախին առաքինութիւնք զար-
 մանալիք . և մեծամեծ գործովք
 առաքինական բարեմասնութե-
 լինի շնաշխարհիկ և երջանիկ յայ-
 սըմ աշխարհի . և երջանիկ կեն-
 դանութեամբն փառաւորի հո-
 դին ՚ի վիճակ փրկութեան, ա-
 զատ ՚ի վշտաց խղճի մտացն . և
 վիճակաւն փրկութե փախի զկնի
 մահուանն ուրախ սրտիւ և բերկ-
 ըեալ հոգւով յերանաւետ կեա-

Նըս յաւիտենական փառաց . և
երանաւէտ կենօք զմայլի և վա-
յելէ զաստուածային անեղծ և
անթառամ փառացն զժառանե-
գաւորութիւն , և զամենացանե-
կալի և զանձառելի փառաւորու-
թիւն Տեառն մերոց Յիսուսի
Քրիստոսի յաւիտեանս յաւիտե-
նից :

(Ե՞ն արիք ապա ըստ յորդո-
րանաց առաքելոյն փոյթ և ջան-
ունելորտի մոօք 'ի խորհուրդու ,
'ի բանս և 'ի գործո մեր : Խոր-
հեսցուք զաստուածայնոցն . խօ-
սեսցուք պանս շահաւորու և օդ-
ուաւէտս ընկերի մերում , և պայ-
ծառացուցիչս հոգւոց մերոց .
խոտորեսցուք 'ի չար և 'ի մօլար
գործոց և վարուց , և հետեւես-
ցուք առաքինական և բարեսպաշտ
արդեանց : Օք մի երբեք յետ-

նեալ և պակասեալ լիցուք յերկ-
նածաւալ շնորհաց անտի . և վա-
սըն հեղդութեան և յետսամիտ
կամաց մերոց՝ ընդունայն և վայ-
րապար եղիցին 'ի մեղ աստուա-
ծային անբաւ բարերարութեա-
նըն պարզեւք անկշռելիք՝ և շր-
նորհք անչստիելիք . զոր նա ինքն
ծայրագոյն բարութիւնն առա-
տաձեռնե առ մեղ ձրիաբար ,
իբրեւ միջնորդ խոկական մերոյս
փրկութեան : « Օ դոյշ լերուք
գուցէ ոք յետնեալ գտանիցի 'ի
շնորհացն (Եֆ . Ժք . 13) : Դոր-
ծակից եմ ձեզ և աղաւեմ , մի ըն-
դունայն զշնորհսն Աստուծոյ ըն-
դունիլ ձեզ (Բ . Արք . Ղ . 1) :



ԳԼՈՒԽ Ժ:

Յաղագո սրանծալի նշանաց Եկեղեցւոյն
Քրիստոսի :

Ճ' շմարտութիւն Եկեղեցւոյն
Քրիստոսի յայտնի Երեւի . և ի-
րաւամբ ասի Եկեղեցի քրիստո-
սական , որ ունիցի զայս չորեսին
գլխաւոր նշանս գերազանց կա-
տարելութեան : Օքրա ցուցա-
նեմք աստանօր ըստ Ճիշտ և բա-
ւական ազգեցութեան սրբազան
և Եկեղեցական գրոց և ուղղա-
փառ գաւանսւթեան մերում ,
որք են այսոքիկ . միութիւն , սրբ-
ըութիւն , ընդհանրականութիւն ,
և առաքելականութիւն . որպէս
միանգամայն առեալ՝ և խորհր-
դով գրեալ՝ ընթեռնումք 'ի ժա-

մագիրս մեր . “ Ա ասն միայնոյ
սուրբ կաթուղիկէ և առաքելա-
կան եկեղեցւոյ ո : ’Ասխ՝ եկեղե-
ցին ՚Քրիստոսի ունի զառաջլն
զայս նշան միութեան . զի զանա-
զան պատճառօք և խորհրդաւոր
վայելութեամբ , է մի ՚ի ՚Քրիս-
տոս Հիսուս . իբրեւ զմի բանա-
ւոր հօտ խնամեալ և պաշտպա-
նեալ ՚ի միոյ քաջադոյն և ամե-
նակարող հովուէ անտի Յիսու-
սէ , որ եղ զանձն իւր ՚ի վերայ
ոչխարաց իւրոց :

Ուեպէտ եկեղեցին ՚Քրիստո-
սի՝ այսինքն բազմութիւն հաւա-
տացելոց , տարածեալ և սփուեալ
երեւին ընդ ոլորտս տիեղերաց
և ՚ի զանազան ազգս և ՚ի բազմա-
տեսակ լեզուս որոշեալ . բայց ու-
նին զմիութիւն ՚ի ՚Քրիստոս Յի-
սուս . զի եկեղեցին մի մարմին է

խորհրդական, ՚ի պետպես անդամաց ուղղափառ հաւասարացելոց՝ ՚ի մի ճշմարիտ գլուխն ՚Քրիստոս յօդակապեալ. «Եւ ձայնի իմում լուիցեն. և եղիցին մի հօտեն մի հովիւ (Հովհ. ժ. 16) : Որպես մարմին մի է, և անդամն բազում ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին են, նոյնպես և ՚Քրիստոս : Այլ գուք մարմին ՚Քրիստոսի էք, և անդամք յանդամոց նորա ո (Ա. Արք. Ժը . 12 և 27) :

Եկեղեցին ՚Քրիստոսի ունի ըդմիութիւն ամենազովելի՝ ՚ի հոգեւոր և աստուածահրաշ ծնունդ գըն միլրատութեան, յորում ազգաւ և լեզուաւ և տեղեաւ հեռաւորք ՚ի միմեանց՝ միանան հոգւով՝ ՚ի մի շնորհական նմանակերպութիւնս ՚Քրիստոսի, և ՚ի մի

Ճշմարիտ հաւասար աւետարանաւ-
կան վարդապետութեան , և ՚ի
միոյ կենդանաբռուղիս աղքերէ-
սուրբ Հոգւոյն ըմալեն զանմահա-
րաբ զեղմունս չնորհաց , ամենեւ-
քին միակերպ գրին յորդեգրու-
թիւն և ՚ի ժառանգութիւն միոյ
միայնոյ հօրն Եպոսւծոյ երկնաւո-
րի , և միանդամայն հրաւիրեալ
գտանին ՚ի մի յոյս երկնային բա-
րեաց և յաւիտենական կենաց
անմահութեան :

Եստանօր խորհրդական յար-
մարութեամբ լրացեալ երեւի
աստուածազդեցիկ մարդարէա-
կան տեսաւթիւնն Արեմիայ (լր .
39) : Եհա եկեղեցւոյ՝ զանազան
աղքաց հաւատացելոց , և « սիրո-
այլ » , բազմատեսակ աղքային ծի-
սիւ , արարողութեամբ և սովո-
րութեամբ յիւրեանո . իսկ ամե-

նեցուն է « Ճանապարհ մի » ,
 'ի մի Ճշմարիտ հաւասար ուղղա-
 փառ դաւանութեան՝ և 'ի մի
 ներգործութիւն սրբարար և
 կենդանարար խորհրդոց քրիստոս-
 աւանդից . որ առաջնորդէ ամե-
 նեցուն միակերպ առ յաւիտե-
 նական երանութիւնս աստուա-
 ծային փառաց . որպէս այս ամե-
 նայն վիպայութիւնք յայտնի ցու-
 ցանեն : « Այլ ոչ վասն նոցա մի-
 այն աղաչեմ , այլ և վասն ամե-
 նայն հաւատացելոց բանիւննոցա
 յիս . զի ամենեքին մի իցեն , որ-
 պէս դու հայր յիս՝ և ես 'ի քեզ .
 զի և նոքա 'ի մեղ իցեն . (Ե՞նչ .
 Ժէ . 20) : Ուր միանդամ 'ի Քը-
 րիստոս միլրակցայք , զՔրիստոս
 զգեցեալ էք . չիք խտիր , ոչ հը-
 րէի՝ և ոչ հեթանոսի . ոչ ծառա-
 յի՝ և ոչ աղատի . ոչ արուի՝ և ոչ

իդի . զի ամեներին դուք մի էք 'ի
· Քրիստոս Յիսուս (Պատ . գ .
27) : Այս մարմին և մի հոգի . որ-
պէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչ-
ման ձերոյ : Այս է Տէր , մի հա-
ւառք , մի մլրտութիւն ո (Լուկ .
գ . 4 . 5) :

Ի՞այց զմիութենէ միաբանա-
կան սիրոյ եկեղեցւոյն՝ թողում
իմաստասիրել հոգեզգօն բանա-
սիրաց . որ առաւելքան զմադ-
նիսական զօրութիւն զայլ և այլ
տարորոշ անդամն եկեղեցւոյ առ-
ինքն հպաւորեալ իրբեւ զմի ան-
ձըն և զմի հոգի՝ մի մարմին կազ-
մէ և 'ի մի գլուխն Կրիստոս
միաւորէ : Երանել յարգողաց զայս
սէր միաբանութեան . Երանել յօ-
ժարելոց ըմակել զայս բաժակ ա-
նապակ , որոյ մատուռւակօղն է
սէր անունն Յիսուս . Երանել այ-

բըս . անտի տեղի տայ տնդարձ
 խուսափնմամբ անիրաւութիւն և
 տոտութիւն , և թագաւորէ ար-
 դարութիւն և ճշմարտութիւն :
 Եւ զի՞ է ինձ երկարել զբանիւ-
 քըս՝ զհուսկն ասացից . միաբա-
 նական այս սէր եկեղեցւոյ՝ ոչ եւ
 թէ միայն զերծուցեալ ՚ի մահ-
 ուանե՛ ՚ի յաւիակենական երանա-
 ւետ կեանս վերածէ զմեզ , և ա-
 զատ ՚ի խուարե՛ մեզաց՝ ՚ի զե-
 րարիի լոյս շնորհաց և արդարու-
 թեան առքերէ , այլ և ծայրա-
 գոյն բարութեան առնե՛ զմեզ
 հաղորդ . ընդ Կոտուծոյ միաւո-
 րէ , և առ Կոտուած բարձրա-
 ցուցանե՛ : Տե՛ս զայս ամենայն և
 ընթերցիր մտառութեամբ ՚ի (Ա.
 Կողն . Ժդ . 4 . մինչեւ ՚ի 6 համարն .
 և ՚ի Ա . կալու . Հավա . դ . 14 . և
 դ . 16) :

բըս . անտի տեղի տայ տնդարձ
 խուսափնմամբ անիրաւութիւն և
 տոտութիւն , և թագաւորէ ար-
 դարութիւն և ճշմարտութիւն :
 Եւ զի՞ է ինձ երկարել զբանիւ-
 քըս՝ զհուսկն ասացից . միաբա-
 նական այս սէր եկեղեցւոյ՝ ոչ եւ
 թէ միայն զերծուցեալ ՚ի մահ-
 ուանե՛ ՚ի յաւիակենական երանա-
 ւետ կեանս վերածէ զմեզ , և ա-
 զատ ՚ի խուարե՛ մեզաց՝ ՚ի զե-
 րարիի լոյս շնորհաց և արդարու-
 թեան առքերէ , այլ և ծայրա-
 գոյն բարութեան առնե՛ զմեզ
 հաղորդ . ընդ Կոտուծոյ միաւո-
 րէ , և առ Կոտուած բարձրա-
 ցուցանե՛ : Տե՛ս զայս ամենայն և
 ընթերցիր մտառութեամբ ՚ի (Ա.
 Կորն . Ժդ . 4 . մինչեւ ՚ի 6 համարն .
 և ՚ի Ա . կալու . Համար . դ . 14 . և
 դ . 16) :

Այսու միութեան սիրոյ քը-
 րիստոսադրոշմնշանաւս՝ Եկեղե-
 ցին Քրիստոսի ճանաշի . այսու
 ամենայն ուղղափառ հաւատա-
 ցեալք միանան ՚ի սիրո և ՚ի հո-
 գի, ոչ հեռաւորութիւն տեղեաց
 և ոչ ազգաց պէսպիսութիք կա-
 րեն անջտել զնոսա ՚ի միմեանց,
 գոլովնոցա կապեալք հզօրագոյն
 զօրութեամբ այսր նշանի միու-
 թեան . և աստուածահաճոյ ա-
 մենաքաղցր և պատուական պր-
 տուղք քաղին յայսմ Երկնուղեւ-
 ծառոյ միաբանական սիրոյն , զոր
 անկեաց ամենահնար ձեռն աստ-
 ուածային ՚ի մէջ դրախտի իւ-
 րում սուրբ Եկեղեցւոյ . և կամի
 հաստատուն արմատանալ սորին ,
 և քաղցրանալ ՚ի պատուղն : “Օ ՚ի
 գուք Երթայցէք՝ և պաղաբերք
 լինիցիք . և պատուղն ձեր կացցէ :

Օ այս պատուիրեմ, զի սիրեսազիք
զմիմեանս (Եօն . ԺԷ . 16 · 17) :
Օ ի սէրն զոր սիրեցեր զիս՝ ՚ի նո-
սա իցէ , և ես ՚ի նոսա (Եօն .
ԺԷ . 26) : Եւ բաղմութեան հա-
ւատացելոցն էր սիրտ և անձն
մի ո (Կառծ . գ . 32) :

Եկեղեցին ՚Իրիստոսի ունի և
զերկլորդ նշան կատարելութե՞ն
և զսրբութիւնն ո , և այս ՚ի բա-
զում պատճառաց ցուցանի . յո-
րոց զգլիսաւորս առեալ և մեք
դիցուք աստանօր : Նախ ՚ի սըր-
բութենէն ՚Իրիստոսի , որ է դր-
լուխ եկեղեցւոյ՝ ըստ առաքելոցն ,
և է սուրբ բնութեամբ և էու-
թեամբ , և բոլորովին սրբութի .
և այսր ամենամաքսւր սրբութե
գտաւ հազորդեալ եկեղեցին՝ այ-
սինքն հաւատացեալք , իբրեւ
բարոյական մարմին միացեալ ընդ-

սրբազնասուրբ գլխոյ իւրոց Յի-
 սուսի Պրիստոսի : Ապա եթէ
 ոք յանդամոց եկեղեցւոյ մնայ
 անբաժան ՚ի սրբարար և ՚ի ճշմա-
 րիոտ գլխոյ իւրմէ ՚ի Պրիստոսէ
 Յիսուսէ, ուղղափառ դաւանու-
 թեամբ քրիստոնէական ճշմարիտ
 և սուրբ հաւատոյ, ոչ երբէք գա-
 հալիմելով ՚ի չարաչար մոլորու-
 թիւնս հերետիկոսութեն և սոս-
 կալի ուրացութեան, անշուշտ
 հաղորդաբար ունի զանախառ և
 զանապական սրբութիւնն Պրիս-
 տոսի, ըստ հաստատուն վկայու-
 թեանցո : « Այս ծնանելոցն է ՚ի
 քէն, սուրբ է (՚ի առ առ . 35) :
 Եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամե-
 նեքին (Յօհ . ժգ . 10) : Այլ
 դուք ազգ էք ընտիր, թագաւո-
 րութիւն, քահանայութիւն .
 ազգ սուրբ, ժողովուրդ սեպհա-

կան . (Ա . Արթուր . Պիետ . թ . 9) :
 Եկեղեցւոյդ՝ Առառւծոյ՝ որ եւ ՚ի
 Արքաթուա՝ նու իրելոց ՚ի Քրիստոս
 Յիսուս , կոչեցելոց սրբոց՝ ամեւ-
 ներումքը հանդերձ , որ կարդան
 զանուն Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի յամենայն տեղիս նո-
 ցա և մեր ս (Ա . Արթ . առ . 2) :

Երկրորդ՝ Եկեղեցին ունի ըզ
 սրբութիւն սրբարար Ճշմարիտ
 հաւատոյ՝ ընդունելով ներքսա-
 պէս զաստուածային աւեարա-
 նական բանս , ուղղափառ մտօք
 և ողջամիտ խորհրդով , որ զմիտս
 ուղղեն ՚ի ճանաչումն Ճշմարտու-
 թեան . և առաջնորդեն կամաց
 յօժարիլ ՚ի գործս բարութեան .
 և սրբեալ զսիրտ և զհոգի յան-
 մաքուր խղճէ և ՚ի չար խորհրդոց՝
 տաճար սուրբ պատրաստեն ՚ի
 ընակութիւն աստուածային մե-

ծութեան . ըստ որում բանիք
Տեառն են բանիք սուրբ . այսինք
քըն յաւելու սրբարար ամենայնի :
“ Առւրբ արա զնոսա ճշմարտու-
թեամբ քով , զի քո բանդ ճշմար-
տութիւն է (Յօհ . ՃԵ . 17) :
“ Դուք արդեն խոկ սուրբ էք վա-
սըն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ
(Յօհ . ՃԵ . 3) : Եւ ոչ ինչ ընտ-
րութիւն արար ՚ի մեջ նոցա և
մեր , հաւատովք սրբեալ զսիրտ
նոցա (Կործ . ՃԵ . 9) : Տաճար
Առառւծոյ սուրբ է , որ էք դուք ”
(Ա . Կործ . գ . 17) :

Երրորդ՝ սրբութիւն եկեղեց-
ւոյ է սրբարար և արդարացու-
ցիչ խորհուրդն մկրտութեան ,
յորում հոգիք սրբին յամենայն
աղտուզութենէ մեղաց , և իրեւ
անօթ սուրբ և անարատ սկան-
րաստին առ ընդունակութիւն

զանազան աստուածային և ձրիտ-
 տուր շնորհաց . և իբրեւ զկոյս մի
 սուրբ ներկայանան տռաջի ան-
 մահ և երկնաւոր փեսային Յի-
 սուսի Քրիստոսի , և հրաւիրին
 համարձակ մտանել ՚ի լուսեղէն
 և յերկնային առադասոն անեղ-
 ծանելի փառաց արքայութեան :
 Եղա որ ունի զայս սրբութիւն
 խորհրդոյ մկրտութեան և զծր-
 նունդ հոգեւոր՝ յորդեգրութիւն
 հօր Եպոսւծոյ և ՚ի ժառանգու-
 թիւն երկնային փառաց՝ է եկե-
 ղեցի Քրիստոսի : ո Եթէ ոչ ոք
 ծնցի վերատին՝ ոչ կարէ տեսանել
 զարքայութիւն Եպոսւծոյ (Յօհ.
 գ . 3) : Արալէս և Քրիստոս սի-
 րեաց զեկեղեցի , և զանձն իւր
 մատնեաց վասն նորա . զի զնա
 սրբեսցէ սրբութեամբ աւազա-
 նին բանիւ , զի կացուոցէ ինքն

իւր յանդիման փառաւոր զեկե-
ղեցի , զի մի ունիցի արատ ինչ
կամ աղսեղութիւն , կամ այլ
ինչ յայսպիսեաց . այլ զի իցէ
սուրբ և անարատ ո (Եթե . Ե .
25) :

Ապաքէն սրբութիւն ամենա-
յըստակ անեղ և աստուածային
էութեանն՝ սքանչելի մարդա-
սիրութեամբ իւրով և անբաւ-
բարերարութեամբ , կամեցաւ
և յօժարեցաւ կոչել զմեղ և
մերձաւոր կացուցանել այսպիսի
սրբարար խորհրդոց . և սրբէլ
զմեղ յաղաց մեղաց , և զհոգւց
տղեղութիւն մեր փոխադրել ՚ի
փառաւոր սպայծառաւթիւն աս-
տուածային մաքրութեան և սրբ-
ութեան իւրոց : Ապա և մեք
ոբարաական եմք ՚ի բաց մերժել
յանձանց մերոց զշարաչար դործա

մոլութեանց , և ուղղել զվարս
մեր յառաքինական գործու բարե-
գործութեանց . և ստանալ զարր-
բութիւն վարուց և գործոց .
որով լիցուք արժանի ժառանգա-
ւոր՝ յաւիտենական վառաց և
երանութեան Յիսուսի Քրիս-
տոսի , ըստ յորդորանաց սըբրա-
զան առաքելոյն Պետրոսի : «Եւլ-
ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ , և
գուք սուրբք յամենայն գնացո
ձեր լինիջիք ո (Ա. Կալես . Պիտ .
մ . 15) :

Եշրուրդ՝ ճշմարիտ Եկեղեցին
Քրիստոսի կոչի կաթուղիկէ . որ
և ՚ի յոյնս ասի իտութեակի կամ
Գալօվկէ , որ առ մեղ ասի տիե-
զերական և ընդհանուր . ըստ ո-
րում ուղղափառ և ճշմարիտ հա-
ւառք՝ և լուսաշաւիղ աւետա-
րանական ողջամիտ վարդապե-

տութիւն և սուրբ կրօնն քրիս-
 տոնեական, տարածեալ և սրփ-
 ոեալ է ընդ ամենայն աշխարհ՝ ի
 ծագաց մինչեւ ՚ի ծագս երկրի,
 քարողեալ և աւետարանեալ յու-
 մենայն աղդս և ՚ի լեզուս։ Ուս-
 տի յորում տեղւոջ և յորում
 աղդի գտանիցի ոք ընկալեալ
 զոիեղերածաւալ այսր ուղղա-
 փառ հաւատոյ զվարդապետու-
 թիւն, յորում և անդրդուելի
 մնայ հաստատուն ըստ գաւա-
 նութեան հանդանակին հաւա-
 տոյ, և լուսաւոր բացատրու-
 թեան աստուածաշունչ գրոց
 սրբոց հին և նոր կտակարանաց,
 յաստուածաղդեցիկ քանս վրձ-
 ոց հոդեղումար սուրբ ժողո-
 վոց, և ՚ի սրբաղան գիրս հարց
 սրբոց, նա իրաւամբ անուանի
 որդի կաթուղիկէ եկեղեցւոյ։

որ և անմոլար ՚ի բանս հաւատաց
 ու զգափառութեան՝ կոչի ու զ-
 գափառ , զորյոյնք անուանեն օր-
 իօտօհսօ : Ապա եկեղեցին ՚Քրիս-
 տոսի և անդամք նորին այնորիկ
 են , որք կան անմոլար և հաստա-
 տուն ՚ի սուրբ հաւատս , զորս
 ուսոց Յիսուս ՚Քրիստոս իբրեւ
 հեղինակ հաւատաց ճշմարտու-
 թեան , և շնորհօք իւրավիք սրփ-
 ուեաց ընդ ամենայն աշխարհ , զոր
 դրունք գժոխոց ոչ կարեն յաղ-
 թահարել : « Կրթայք յաշխարհ
 ամենայն , և քարտղեցէք զաւե-
 տարանն ամենայն սրարածոց . որ
 հաւատայ և միլտեսցի , կեցցէ .
 և որ ոչն հաւատայ՝ գատապար-
 տեսցի (Վարք . ՃԵ . 15) : Ա ասն
 յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս .
 զօրմեւ լուարուք բանիւն ճշմար-
 տութեան աւետարանին , որ ե-

Հաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն
աշխարհ աճէ և սպազաբերէ. որ
պէս և 'ի միջի ձերում (կող . ա .
5) : Այլ յամենայն ազգս՝ որ եր-
կընչին 'ի նմանէ, և դործէ զար-
դարութիւն, ընդունելի է նման
(Գործ . ժ . 35) :

Չորրորդ՝ նշան կատարելու-
թեան եկեղեցւոյն Քրիստոսի է
լինել առաքելական, այսինքն ան-
խախտ և անշարժ հաստատեալ
'ի վերայ հիման ճշմարիտ վարդա-
պետութեան և քարոզութեան
սրբազն առաքելոց, և անխա-
փան պահեալ զաւետարանական
աւանդութիւնս նոցին . որովհե-
տեւ Քրիստոս տիրապէս և բա-
ցարձակ հեղինակ եղեւ ճշմար-
տութեան հաւատոյ . և առաջին
մշտնջենաւոր հիմն վերամբար-
ձող եկեղեցւոյ, անմիջաբար վար-

գապետելով և շնորհաբուղիս օ-
 րէնըսդիր լինելով . ըստ այնու
 ու մի կոչիք ուսուցիչք , զի
 ուսուցիչ ձեր Քրիստոս է (Առա.
 իդ . 10) : Օ ի հիմն այլ ոչ ոք
 կարէ դնել քան զեղեալն՝ որ է
 Յիսուս Քրիստոս ա (Ա . Արք . գ .
 11) : Իսկ սրբազն առապեալք
 եղեն քարոզիչք , և յայտնաբար-
 բառ վարդապետք ճշմարիտ հա-
 ւասոյն Քրիստոսի . և այսր ըս-
 քանչելի հիմնարկութեանն քա-
 ջահմուտ գործակալք և ըսպա-
 սաւորք . զոր բացայայտ ծանու-
 ցանե՛ Հայր Գարբիել ՚ի մեկնու-
 թեան թղթոց Պօղոսի (Հայոց Բ .
 յերես 533), յասելն . և Օ ի առա-
 պեալքն ոչ ըստ անձանց իւրեանց
 կամ ըստ զօրութեան եղեն հիմն
 եկեղեցական շինուածոյ , այլ ըստ
 վարդապետութեանն՝ զոր քարո-

զեցին ո : | Հւ անդ ՚ի 534 թղթա-
համարի . « Ախայն առաքեալք և
մարդարէք կոչին հիմունք եկեղե-
ցւոյ , այսինքն իբրեւ պաշտօ-
նեայք հիմնարկութեան նորա ՚ի
ձեռն վարդապետութեան իւր-
եանց և վկայական ջանից ՚ի տա-
րածանել զհաւասս եկեղեցւոյ .
ապա թէ ոչ առաջին և վերամ-
բարձող հիմն , մշտնջենաւոր և
բայցարձակ է միայն Քիսուս ՚ի
ըիստոս ո :

Ապա սրբազն առաքեալք՝
ոչ որպէս մարդարէք ընդ աղօտ
օրինակօք և առ յապայն եղելոց
վկոյութեամբ ցուցին մեզ զշնոր-
հական օրէնս փրկչին ՚ի ըիստոսի .
այլ ինքեանք իսկ անձամբք և տե-
ղեօք մերձաւորք նմին և աստուա-
ծահրաշ սրանչելեացն ականա-
տեսք՝ և կենսաբուղիս բանիցն ա-

կանջալու ըբ լինելով՝ արձակ հա-
 մարձակ վկայութեամբ քարոզե-
 ցին ընդ ամենայն աշխարհ զՃր-
 մարիս հաւատս նորին . և զաւե-
 տարանն անմահ կենդանութե :
 Ուստի՝ որ և իցէ աղդ հաւատա-
 ցեալ և մկրտեալ , որ կայ անդըր-
 դուելի հաստատեալ յաշխար-
 հառարած վարդապետութիւն ա-
 ռաքելական քարոզութեան՝ և ՚ի
 բանս դաւանութեան . ստուգիւ-
 տսի և կեզեցի առ արելական . զոր
 ցուցանեն բանկը վկայութեանցս
 ողջամիտ քննողաց : « Գնացէք այ-
 սու հետեւ՝ աշակերտեցէք զամե-
 նայն հեթանոսս . մկրտեցէք զնո-
 սա յանուն հօր՝ և որդւոյ՝ և հո-
 գւոյն սրբոյ . ուսուցէք նոցա պա-
 հել զամենայն՝ զոր ինչ պատուի-
 րեցի ձեզ (Մատ . իւլ . 19) : Այ-
 նուածոյ շնորհը՝ որ յամենայն

Հուչակ հարկանեւ զմենջ ՚ի ՚Քրիստոս Յիսուս . և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնեւ մեօք յամենայն տեղիս (Բ. Արք. թ. 14): Ո՞ր տեսաքն և լուաք՝ պատմեմք և ձեզ, զի և դուք հաղորդութիւնիցիք ընդ մեզ . և մեր հաղորդութիւնն իցէ ընդ հօր և ընդ որդւոյ իւրում Յիսուսի ՚Քրիստոսի ” (Յօհ. Ա. Ամեն. ա. 3):

Երդ ընդ այսքան յորդութիւնը ուղիսօրէն հոսանաց զանազան շնորհացն Աստուծոյ՝ մի գուցէ պատահեսցի մեզ ունայն և թափուր յամենայնեւ գտանիլ, իբրեւ զսափոր ինչ ծակոտեալ և բեկեալ, յորում չէ հնար պարունակիլ և պահիլ նիւթ ինչ հեղանուտ : Ահա այսպիսի է սիրոտ աշխարհասիրին՝ որ ունի զսիրոտ իւր ՚ի զանազան մոլութիս և ՚ի դիւ-

բախար հեշտութիւնս բեկեալ և
 բաժանեալ, և ոչ յամբողջութիւն
 առառաւածսիրութեան, և ՚ի դոր-
 ծըս բարիս հաստատիչս և կազ-
 գուրիչս սրտից և հոգւոց, որով
 և անընդունակ գոտանի երկնաւոր
 և հոգեւոր բարեաց : Ո՞ւ և մի
 երբէք լիցի մեղադահութեամբ
 և ժլաստութեամբ խնայել աղքա-
 տաց և կարօնեալ եզրարց մերոց
 զնուրան ողորմութեան, զի մի կա-
 մակար մաօք սւնայն վերադարձ-
 ցուք ՚ի շնորհահոս աղբերէն կե-
 նաց ՚ի Յիսուսէ Քրիստոսէ, որ
 պիսի էր աղահ և ընչասէր երի-
 տասարդն . որոյ կարի զառածեալ
 գոլով ՚ի չարազդած աղահութիւն
 երկրաւոր ստացուածոց, անհա-
 ճոյ թուեցաւ կամացն առասո-
 ձեռնել աղքատաց . վասն որոյ
 ինքնին մերժեցաւ և հեռացաւ

՚ի ծայրագոյն բարեոյն ՚ի Ծիսուս
սէ ՚Վրիստոսէ , զերկրայինն լաւ
համարելով քան դյաւիտենական
փառս արքայութեան երկնից , և
զրկեցաւ ՚ի լիութենէ անկաղոսկ-
տելի դանձուց ձրիապարդեւ շը-
նորհաց (Ո՞աֆ . ժթ . 22) :

Փութասցուք ապաքէն ըստ
այսափ յոլովութիւնս սրբարար
շնորհացն ՚Վրիստոսի բարերար
փրկչին մերոյ , և ընդ այսքան պանչ
ծալի բարութիւնս սրանչելի նրա
շանաց քրիստոսական ճշմարիսն ե-
կեզեցւոյ նորա յարմարել և վա-
յելացուցանել զգործս մեր . ո-
րով արժանապէս լիցուք անդամք
եկեղեցւոյ՝ և բարոյական մարմին
՚Վրիստոսի , աստուածայինյօդիւ
խաղաղութեան և սուրբ սիրոյ
նորա ստացեալ ՚ի մեղ զմի սիրա
և զմի հոգի : Ո՞ի բանակոիւ լիւ

նել յօժարեսցուք յայնպիսի խըն-
 դիրս անօգուտոս և ՚ի զանազան
 վէճս կարծեաց մտացածին խոր-
 հըրդոց մերաց . որով՝ ոչ միայն
 հարկանիմք ՚ի միմեանց և վիրա-
 ւորեմք զսիրտս միմեանց , այլ և
 մնասի վիճաբանութեամք անմի-
 տբանք և անհաշտ թշնամիք գո-
 լավ իրերաց ՚ի զանազան գայթագ-
 ղութիւննու և ՚ի պէսավէս շփոթու-
 թիւնս մտաց , կործանեմք զուն-
 կընդիրս մեր , յորոց արդելու զմեզ
 առաքեալն՝ ընդ նմին և յաջորդք
 նորին հարք եկեղեցւոյ , որք ու-
 սուցին զմեզ խաղաղութեն և սի-
 րոյն հոգւով վառեալ ու զիզ հա-
 մառօտել զբանն ձշմարտութե ,
 և շնորհիւ նր Հագւոյն արծար-
 ծել զերինային բորբաք ածային
 սիրոյն ՚ի սիրտս մեր (Տիմոթ . ի .
 14 : Առաք . Ժլ . 19 : Յօհ . ԺԵ . 12) :

Վի սրակառեցուք երբէք ՚ի սիրելոյ զմիմեանս . զի սէրն՝ զոր սիրեաց զմեզ կենարարն մեր ՀՅիսուս , գոցյէ ՚ի մեզ լի արդետմբը բեղմնաւորեալ : Ծանիցուք՝ եթէ զոր սիրեմքս՝ եղբայր մեր է , քան զամենայն արարածս սիրելի Աստուծոյ , մանաւանդ և դին պատուակոն արեան Որդւոյն Աստուծոյ : Ապա մի երբէք վերջացեալ լիցուք յեղբայրուիրուէ ատի . զի մի աստուածսիրութեանըն կնիք եղծանիցի ՚ի մեզ : Վի ասեցուք զեղբայր մեր , զի մի աստուածատեաց լիցուք , և մի սխակալութեամբ զանոխակալին Աստուծոյ մերկասցուք զպատմուձան լուսեղէն փառաց ՚ի հոգւոց մերոց , և զոխերիմ բանարկուին զգեցցուք զոեւախմոյր հանդերձ կորառեան և անարդութեան :

Վիշտութեացուք նախառական
 կան բանիւք խոցոտել և վիրաւու-
 թել զսիրտս միմեանց , զի մի պար-
 ասապան լիցուք գեհենի հրոյն յա-
 ւիտենական դատապարտութեն :
 Յարդեսցուք զսեր միաբանական ,
 զոր և իրօեւ ղիւակական դրօշակ
 պարծանաց քրիստոնեութեն զա-
 ռաջեաւ կրեսցուք համարձակ
 (էջու . ժգ . 35 : Կործ . ք . 1) :
 Վարրեսցուք զսիրտս մեր յամե-
 նայն մեղաց . զի սիրտ սուրբ՝ մա-
 քուը խիղճ , և միտք բարեզգած՝
 աստուածային շնորհօք և փառօք
 է զարդարուն , և Հոգւոյն սրբ-
 ոց յարդարեալ տուն : Օ Բնէ
 շահ ինձ ՚ի սրբութեան նշանե-
 անտի եկեղեցւոց , որոյ լինելով
 իմ մասն և անդամ , կուտեցից՝
 և բարդեցից ՚ի սրտի իմում ըդ
 բազմատեսակ ախտս մոլութեան

և գարշահոտ մեզաց . և զիակոր
 համարձակեցաց անուանիլ ան-
 դամսրբանուէքը եկեղեցւայն Ք.ք.
 բիստոսի . Եթէ ՚ի բիւրատեսակ
 յանցանս չարագործութեան ըն-
 կըզմեալ և զօղեալ ունիցիմ զիմ
 համակ սիրտ . մի թէ ՚ի սկատմաւ-
 ճանս բեհեղեցւայս , և ՚ի զգեստո
 ծիրանիս զարդարի հոգին . ոչ ա-
 սրաքէն պէսպէս հանգերձանիք
 մարմնաւոր զարդուց՝ բուրմունիք
 օծութեան աղնիւ և քաղցրահոտ
 իւզոց , և հետեւմունք վայրկե-
 նական հեշտութեանց՝ բոլորովին
 արտաքնայարդար դերեղման առ-
 նեն զհոգին . որք արտաքուստ
 դեղեցիկը և հաճելիք Են յաշո
 մարդկան , բայց ՚ի ներքուստ լի
 չարեօք՝ և առելի Են յաշո Ար-
 տուծոց (Ա)ար . իր . 27 : Հ-Հ-Հ-
 Ժ-Ք-Ա-Լ) ։ Յանձնական կառանձնութեան

Պատրաստ եղիցուք հպատակիլ և հնագանգիլ ողջամիտ խորհրդով և առաքինի վարուք՝ ճըշմարտութեա քրիստոնէական լուսաւոր վարդապետութե, որ ընդամենայն աշխարհ տարածեալ է և սփառեալ, և իբրեւ զլապտերանշեց և լի լուսավ տատուածային գիտութեան բոցափայլեց յուշը տեսողաց . որով գաղտնիք հաւատոց յայտնին պայծառագոյն, և առաջնորդեն մեղ ՚ի նաւահանգիստ լուսաւոր վարուց և գործոց առաքինութե . յորում և ապահով և աներկեւան մնայ հօգի մեր ՚ի խաւարամած շոգեաց մեղսասահ մոլութեանց . և իբրեւ զիշմա կենդանիս լինիմբ տաճար հօգեւոր, և վառք ածային տեսանի ՚ի մեղ վայելացեալ յամենայնի, որով զօրանամք յաղթել

չար կրից մերոց և լինել բարի և
առաղջ անդամ եկեղեցւոյ : Իսկ
մոլորեալքն իրաւամբ կոչին չար-
և ախտաւոր անդամ եկեղեցւոյ :

Այս ընդհանուր տարածու-
թիւն ճշմարտութեան ուղղա-
փառ հաւատոյ , ոչ երբէք յու-
սաբեկ առնել զսիրտմեր , այլ քա-
ջալերէ , եթէ կայ ընդ ամենայն
աշխարհ մերձաւոր օդնական մեր
Տէր Յիտուս Քրիստոս , ՚ի թի-
կունս հասանիլ տկարութե՛ մե-
րում : Այս տիեղերատահման
ճշմարտութիւն հաւատոյ , իր-
քեւ լոյնատարած տաղաւար իմն՝
յագահովս կացուցանել զառ յիւ-
քըն ամրացնալս և զանդրդուե-
լի ասրաւինեալս , յամենայն ար-
կածից և ՚ի բռնութեանց թրշ-
նամեյն հոգւոց մերոց (Յօհ . ը .
32 . 10 . ժար . 6 : Նույն . ժ . 12) :

Խորհեսցուք զբարիս միմեանց,
 օրինակ վարուց բարեաց լիցուք
 եղբարց և ընկերաց մերոց . յոր-
 դորեսցուք զմիմեանս ՚ի գործս
 առաքինութեան . հայելի առա-
 քինութեան լիցին գործք մեր և
 վարք . նմանեսցուք առոքելոցն
 սրբոց բանիւք և դնացիւք , սի-
 րով և խաղաղութեամբ . ոչ մի-
 այն քարտղիչ ճշմարտութեան ա-
 նուանիլ յօժարեսցուք , այլիւ ըդ
 նոյն ճշմարտութիւնն գործովա-
 ռաջի ամենեցուն մեծարել . ոչ
 յունկս այնքան լսելի առնել զա-
 ւետարանականն կենսաձիր խր-
 բատ , որքան արդեամբ ծաւա-
 լել զնա ՚ի յորդոր ամենեցուն
 առ այն : Ա ասն զի լոկ նշանաւ
 կամ զուղիղ դաւանութեան նո-
 ցին ունելով զինիք՝ թէպէտ կա-
 րեմք վերաձայնիլ եկեղեցի առա-

քելական , բայց ոչ իրրեւ զառա-
 քեալս հաճախանալ . Քրիստոսի
 Տեառն մերոց և լինել Ժառան-
 գակից փառաց և երանութեանց
 նորին : Օ ի զի՞նչ օգուտ է , ե-
 թէ ղուղիղ դաւանութիւն և
 զողջամիտ վարդապետութիւն ա-
 ռաքելոց դաւանիցիմք , և զվարա-
 վատթարս և զգործս չարութեան-
 ունիցիմք : Եղա բանք և դործք
 մեր յարմարեսցին առաքելոցն
 որբոց , որով արժանապէս և ի-
 բաւամբք անուանեացուք եկեղե-
 ցի առաքելական , և արդեամբք
 հետեւող Քրիստոսի և փառա-
 բանիչ անուան նորին , ուղիղ
 հաւատով և բարի գործով (Մատ.
 Ե . 16 : Փէլք . գ . 17) :



ԳԼՈՒԽ ԺԵ

Յաղագո եօթն խորհրդաց Եկեղեցւ ոյ :
Օքնը է խորհուրդն :

Սորհուրդն է դաղանի ինչ , որ
՚ի մեջ երկուց կամ երից անձանց
մնայ ծածկեալ . որպէս վրկութի
մեր իբրեւ խորհուրդ մնայր ՚ի
թագուն կամս սրբոյ Արքորդու-
թեան : « Օ խորհուրդն՝ որ ծած-
կեալ էր ՚ի յաւիտենից և յաղ-
գաց » (Ալլ . առ . 26) : Խոր-
հուրդն իմանի այն դործ , յոր
դաղանութիւնն մտաց երեւի . զոր
օրինակ , յորժամ տեսանեմք ՚ի
յայտնի իրս զգաղանի ինչ առեմք ,
խորհուրդ կայ աստ . իբր զի՞ զայլ
ինչ տեսանել , և զայլ ինչ հաւա-
տալ ՚ի նմա : Աղա եօթն սըրբա-

բար գործադրութիւնկեղեցւոյ վա-
յելսաբար ասացաւ և խորհուրդ ա-
վասն զի՝ 'ի զգալի և 'ի նիւթա-
կան գործառնութիւնս փրկարար
խորհրդոցն՝ այսինքն 'ի գինին և
'ի նշանաբն հաղորդութեան , 'ի
ջուրն մկրտութեան , 'ի միւռոնն
և յամենայն հարկաւոր նիւթս
խորհրդոցն՝ զպէսպէս գաղտնի և
զանեթեւոյթ ներդործութիւնս
շնորհաց խոստովանիմք :

Վարաքէն խորհուրդ ասելով
որոշեցաւ 'ի նշանայն հին օրի-
նաց , զի ամենայն գործք հին օ-
րինաց նշանիք էին և ոչ խոր-
հուրդք , ըստ որսամ չունեին ինչ
սրբարար ներդործութիւն . որ-
պէս թվիատութիւնն էր նշան
ինչ , որ որոշեր զաստուածապաշ-
արս 'ի հեթանոսաց . ըստ այնմ՝
Աշանակ առ զթվիատութիւնն ,


կնիք արդարութեան հաւատոցն
 (Համ. դ. 11)։ Ուրեմն զհին
 օրէնս կարեմք միայն անուանել
 նշանք սուրբ գործադրութեան,
 զի միայն նշանակէին զսրբացու-
 ցիչ շնորհս խորհրդոց նոր օրինա-
 ցըն Քրիստոսի, բայց ոչ տային
 զշնորհս վրկութեան հսկուց. վո-
 զի՞ չունեին զներքին սրբարար
 գործս. այս է, զսրբութիւն հոգ-
 ւոց, զարդարութիւն աղասու-
 թեան յանիծից մեզաց, զանմա-
 հութիւն կենաց յաւիտենից,
 զորդեղրութիւն Հօրն Երկնաւո-
 րի՞ և զժառանգութիւն Երանաւ-
 կան փառաց։ Արակէս նշանն գոր-
 ծիքական թէպէտ յանդիման առ-
 նէ մտաց զայլինչ բաց յիւրմէ,
 սակայն ոչ ունի զնմանութիւն
 յայտնելոց իրին. զոր օրինակ, ար-
 շալոյսն է նշան բնական ծագման

արեւուն . և ամսն ծագեալ յա
 րեւմաից՝ է նշան անձրեւոյ . բայց
 ոչ արշալցան ունի զներգործու
 թիւն արեգական . և ոչ ամսն
 զանձրեւոյն զնմանութիւն : Այս
 պէս ամենայն գործք ստուերա-
 կան օրինացն՝ միայն ցուցանէին
 զարբագործ խորհուրդս՝ Քրիստո-
 սի Տեառն մերոյ . բայց ոչ ունեւ-
 ին զնոյն ներգործութիւն շնոր-
 հաց : Որպէս ջուրն լուացման .
 որով սրբութիւն մարմնոյ կատա-
 րիւր 'ի ձեռն քահանայից . և լո-
 ւացի ջրով և սուրբ լիցիու (1 Եպ.
 ժդ . 8) . էր նշանակ մկրտութե ,
 որով լինի սրբութիւն հոգւոյ :
 Օ ենումն զատկական գառին , որ
 հրամայեցաւ արեամբ նորին սըրա-
 կեւ զսեմօք գրանց խրայելացւոց ,
 որով ասպրեցան անդրանիկք նոցա
 'ի ժամանակաւոր մահուանէ (Եւ

Ժր. 23), ցուցաներ զիսորհուրդ
հաղորդութեան, որով փրկիմք ՚ի
յաւիտենական մահուանե : « Եւ-
թե ոչ կերիջիք զմարմին որդւոյ
մարդոյ և արբջիք զարիւն նորա,
ոչ ունիք կեանս յանձինս (Հօն.
դ. 54), խոյն կախեալ զարեկայ՝
փոխանակ իսահակայ եղեալ ող-
ջակեղ, էր նշան Քրիստոսի . որ
իրբեւ զգառն Աստուծոյ կախե-
ցաւ զիստչափայտեն ՚ի փրկու-
թիւն աշխարհի : « Վհաւասիկ
դառն Աստուծոյ որ բառնայ ըդ-
մեզս աշխարհի » (Հօն. առ. 29) :

Վհա սյսորիկ ամենայն նշանիք
կոչին, զի չեին հարկաւոր առ
փրկութիւն հոգւոյ . ըստ որում
՚ի գործոյ գործեցելոյ անտի նշա-
նակեալ լինեին կենդանարար շք-
նորհք նոր օրինացս . խել ՚ի գոր-
ծոյ գործողին եթե արդազք էին՝

յանուն Աստուծոյ գործելովըն-
դունելին զպէսպէս խնամն Աստու-
ծոյ . և եթէ մեղաւորք՝ առնելով
զայնս իրքեւ զգործ հաճցական՝
արդիւնաւորէին զողորմութիւնս
Աստուծոյ : Իսկ նոր օրէնք կո-
չին և խորհուրդ ։ ըստ որում
սահմանեալ է ՚ի Տեսունէ մերմե-
Յիսուսէ ՚Քրիստոսէ առ փրկուի
հոգւոյ . հարկաւոր առ ՚ի տալ
արժանաւորաց զշնորհս զանազան
սրբութեան . ըստ այնմ ՚Քանզի
զատուեր հանդերձելոց բարեացն
ունէին օրէնքն , և ոչ զնոյն կեր-
պարանս իրացն ո (Երբ . Ժ . 1) :



ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս ներդումը մէկան խորհրդացն :

Ի ձեռն սրբարար խորհրդուցը՝ վախի վիճակ քնութեան մերում. վասն զի՞ ՚ի վիճակէ յանցանաց վերածիմք ՚ի վիճակէ արդարութեան, և ՚ի վիճակէ դատապարտութեան՝ ՚ի վիճակ շնորհաց և փառաց . մանաւանդ ՚ի ձեռն նոցա զարդարիմք գերբնական ձրբիւք : Եւ իւրաքանչիւր խորհրդութ յարմարապէս հային առեօթն առաքինութիւնս, որոց եւրեքն են աստուածաբանական . այսինքն հաւատ, յոյս, և սէր, և չորքն բարօյական . ոլք են արիւթիւն, արդարութիւն, խօհեւմութիւն, և բարեխառնութիւ :

Վկրտութիւնն է խորհուրդ
սրբարար . որ սրբէ զհոգին ՚ի ըս-
կըզբնական մեղաց . և եթէ մը-
կրտեալն իցէ չափահաս և ունի-
ցի զմեղս ներդործականս՝ զայն
եւս մաքրէ : Այս խնդրէ « զհա-
ւաս » : Եթէ չափահաս իցէ մը-
կրտեալն , պարու է նմա ունիլ
զիսոստովանութիւն քրիստոնէա-
կան ճշմարտութեան . որ յայտ-
նի երեւի յերկոտասան մասանց
բանիցն առաքելոց հաստատեալ
՚ի համագանակին հաւատոց : Օ ի
սրբազան առաքեալք յաւուր
Պէնտէկոստէի , նախ քարոզեցին
զՃշմարիտ վարդապետութիւնն
Քրիստոսի և ապօս միլլուցին .
որպէս պատմի զքարոզութենի-
սրբազան առաքելոյն Պէտրոսի ՚ի
գործս առաքելոց (բ , 41) . « Ո-
մանք յօժարութեամբ ընկալեալ

զրան նորա՝ միլրտեցան ու : Խակ եւ
թէ իցէ տղայ, բաւական է նմա
հաւատք ծնաղացն, կնքահօրն և
և կամ միլրտող քահանային, որ
՚ի գիմայ նորին զխոստավանու-
թիւնն առնել իբրեւ երաշխա-
ւոր, որը և յետոյ պարտաւորին
ուսուցանել նմա զՃշմարտու-
թիւնս հաւատոյ . և կրթել ՚ի բա-
րի վարս : “ Ար հաւատոյ և մը-
կրտեսցի, կեցցէ ո (Ամր. ժղ. 16):

Դրոշմն է խորհուրդ զօրացու-
ցիչ, որ կնքէ զմիլրտեալն անջնջե-
լի շնորհօք սուրբ Նորւոյն : Առ
տայ և զարիտ թիւնն ո , որով յաղ-
թէ մալութեանց, և յառաջա-
դէմլինի յառաքինութիւնս, իբ-
րեւ քաջ զինուոր Քրիստոնի :
“ Եւ իբրեւ լուան (Եփեսացի-
քըն) միլրտեցան յանուն Տեառն
Յիսուսի . և ՚ի գնել ՚ի վերայ նո-

ցա Պօղոսի զձեռն , և կե շոդին
սուրբ ՚ի մերայ նոցա . խօսէին
լեզուս և մարդարէանային ”
(Պատրժ . Ժթ . 6) :

Հաղորդութին է խորհուրդ
կենդանարար , որ քաշխէ արժա-
նաւորելոց դյաւիտենական կետ-
նըս . առ տագաւորէ ՚ի հոդիս զաս-
տուածային և սէրն ” , որով միա-
նամք ընդ Քրիստոսի . և Ալ ու-
տէ զմարմին իմ , և ըմալէ զարիւն
իմ , նա յիս քնակեսցի և ես ՚ի
նմա . և որ ուտէն զիս , կեցցէ
վասն իմ ” (Յօհ . Ղ . 55) :

Կպաշխարութին է խորհուրդ
արդարացուցիչ , որ զհոդիս վճա-
րողաց ՚ի ձեռն կատարեալ զղջման՝
արձակէ ՚ի մեղաց , և մերածէ
յաստուածային շնորհս . ոմա
վայելէ , “ արդարութիւն ” , առ
՚ի յարդել զօրէնս Այսուծոյ , և

ատել զանօրէնութիւնս մեղաց .
« Վմենայն որ զմեղս գործէ , նաև
զանօրէնութիւնս առնէ , և ինքն
իսկ մեղքն անօրէնութիւն է »
(Ա. Յօհ . դ . 4) :

|| Երջին օծումն է խորհուրդ
առողջաբար , որ տայ հիւանդաց
զառողջութիւն ըստ հոգւոյ և
ըստ մարմնոյ , սա ընծայէ զայոս » ,
առ ՚ի հասանիլ ՚ի յարկս սրբոց
աստուածային ողսրմութեամբ :
« Յարուսցէ զնա Տէր , և եթէ
մեղս ինչ գործեալ իցէ , թողի
նմա » (Յահ . Ե . 15) :

Խարդն է խորհուրդ հոգեոր
իշխանութեան . սովաւ լինի մարդ
պաշտօնեայ խորհրդոց և հավիւ
բանաւոր հօտիցն Քրիստոսի . սր-
բա պատկանի « խոհեմութիւնն »
առ ՚ի բարւոք կառավարել զժո-
ղովուրդ Տեսան , զգինս փրկու-

բար արեան Արդւոյն Կատուծոյ .
 «Օ զոյշ կացէք անձանց և ամեւ-
 նայն հօտիւգ , յորում եղ զձեղ
 Հոգին սուրբ տեսուչո՝ հովուել
 զժողովուրդ Տեառն՝ զոր ապրե-
 ցոյց արեամբ իւրովո (Պործ .
 ի . 28) :

Պատկն է խորհուրդ սուրբ մի-
 աւորութեան , որով կենակցին
 այր և կին՝ միաւորութեամբ որ
 սիրոյ առ ՚ի պաղաքերիւրդւովք .
 Խնդրե սա և զբարեխառնութին ,
 զի մի յափշտակեսցէ զնոսա հեշ-
 տութիւնն չար ցանկութեան .
 «Օ ի որ ունիցին կանայս , որ-
 պէս թէ չունիցին » (Ա . Արքն .
 ի . 29) :



ԳԼՈՒԽ Ժ. Պ.

Յաղագ հեղինակին խորհրդոց :

Առաջին հեղինակ սրբարար
խորհրդոց է Հայո Արտուած .
ըստ սրբում իշխանաբար ցուցա-
նէր նախահարց ՚ի հին օրէնս ըզ
աւատւթիւն խորհրդոցն՝ բազմա-
կերպ օրինակօք և նշանօք . որ ՚ի
լրման ժամանակաց ՚ի վերջանալ
մարդարէից , և ՚ի հասանիլ նա-
խասահմանեալ աւաւրց փրկու-
թեան մերոյ , ստհմանադրեաց
փառակից Որդւ ովին զամենացն նա-
խագրեալսն : « Քաղում մասամբք
և բազում օրինակօք կանխաւ խօ-
սեցաւ Արտուած ընդ հարսն մեր
մարդարէիւք ո (Եֆր . առ . 1) :

Անմիջաբար հեղինակ խորհր-

դոցն է Արդին Եպուածոյ Հիսուս
Քրիստոս . ըստ որում ինքն բա-
ցայացտելով զամենայն շընորհա-
կան խորհուրդս աւանդեաց ա-
շակերտաց իւրոց , է որ բանիւ-
ե է որ գործով . վասն որոյ տիրա-
պէս հեղինակ չնորհաբաշխ և սրբ-
բացուցիչ խորհրդոցն եկեղեցւոյ
է Հիսուս Քրիստոս . ըստ այնմ,
« Ընորհք և ճշմարտութիւնն ՚ի
ձեռն Հիսուսի Քրիստոսի եղեւ » :
Պարտ է դիտել և զայս , թէ ուր
և Երբ և ինչ եղանակաւ սահ-
մանադրութիւնն խորհրդոցն եղեւ
՚ի Տեառնե մերմե . վասն որոյ ՚ի
ստորեւ բացատրեսցի համառօ-
տակի :

Ոկրուութիւնն ՚ի Հորդանան,
ըստ որում ինքնին Հիսուս ե-
կեալ անդ ՚ի Կաղարեթէ դալի-
լեացւոց , մինչ էրն իրբեւ ամաց

Երեսնից ընկալաւ զմլրտութիւնն
՚ի Հօհաննեկ . ոչ զի կարօտ էք
մաքրութեան սրբացուցիչն ամե-
նեցուն , այլ զի հաստատեցէ ըդ
խորհուրդ մլրտութեանն իւրով
անձառելի խոնարհութեամբ :

Խորհուրդ գրոշմին բանիւ ա-
ւանդեաց զկնի յարութեանն ա-
սելով : « Այլառ ջիք զզօրութիւն
՚ի հասանիլ Հոգւոյն սրբոյ ՚ի վե-
րայ ձեր , և եզիջիք ինձ վիայք
յլըրուսաղէմ » (Պարծ . ա . 8) :
Աղաքէն գրոշմիւ զօրանսամբ հա-
մարձակ խոստովանիլ զՃշմարիտ
հաւատըս Քնի , և ՚ի հոգիս մեր
հեղանի շնորհ սուրբ Հոգւոյն
իրեւ կնիք անջնջելի : Եւ զայս
սկարտ է տալ զկնի մլրտութեան
անյապաղ՝ չանցուցանելով ՚ի վե-
րայ զժամանակ ինչ . զի յայս խոր-
հուրդ հայեր իջումն Հոգւոյն

սրբոյ աղաւնակերպ ՚ի վերայ կե-
նարարին մերոյ Հիսուսի՝ ըստ այ-
նքմ, « Եւ իբրեւ մկրտեցաւ
Յիսուս, եւ վաղվաղակի ՚ի ջրոյ
անափ. և ահաբացան նմա երկինք.
և ետես զշողին Վասուծոյ՝ զի
իջանէր իբրեւ զաղաւնի, և գայր
՚ի վերայ նորա » (Վաս . դ . 16) :

Հաղորդութիւնն խօրհուրդ
սքանչելի, զօր ՚ի վերջին ընթրի-
սըն սահմանեաց, նախ օրհնելով
զհացն և զգինին, և ապա յայտ-
նի բանիւ առելով և Վայ է մար-
մին իմ. այս է արիւն իմ », և այ-
սու եղանակաւ զքահանայադոր-
ծելն մեզ աւանդեաց. ըստ այ-
նքմ, « Օ այս արասջիք առ իմոյ
յիշատակի ո (Վա-ի . իր . 19) :

Վակաշխարութեանն զարմա-
նալի խօրհուրդ՝ նախ քան զշար-
չարանս իւր բացարձակ կապողու-

թեամբ և իրքեւ հեղինակ քա-
 ւութեան և թողութեան մեղաց
 կատարեաց յաշխարհի ըստ այնմ,
 « Վիտասանիք եթե իշխանութիւն
 ունի որդի մարդոյ յերկրի թո-
 ղութեաց » (Եվա . թ . 6 .) : Եւ
 ցկինն մեղաւոր առեր և թողեալ
 լիցին քեզ մեղք քո » (Դակ . է .
 48) : Իսկ յերեկոյի առաւրն միա-
 շաբաթով յետ յարութեանն ե-
 րեւեալ աշակերտացն ի վերնա-
 տան անդ , ուր ժաղավեալ է ին՝
 ետ նոցա զայս իշխանութի , յար-
 ժամ փշեաց ՚ի նոստ առելով և Ա-
 ռեր Նոդի սուրբ ։ այս ոչ ըդ-
 լլրութիւն սպարդեւաց սուրբ
 Նոդւոյն ցուցաներ , զոր ընդու-
 նելոց է ին յաւուր Պինտեկոստեի-
 ոյլ զիշխանութիւն կապելոց և
 արձակելոց . վասն որոյ անմիջա-
 բար ասաց . « Եթե ումեք թո-

զուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա . եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի ո (Հօհ . ի . 23) :

Վերագոյն իշխանութիւն այս ոչ յառաքեալս միայն տարածեցաւ , այլ և յամենայն օրինաւոր յաջորդս նոցա . վասն որոյ գլխաւորն յառաքեալս երանելին Պետրոս զամենայն երիցունս եկեղեցւոյ սպասուակիցս և աթոռակիցս գրէ ասելով « Օ երիցունս այսուհետեւ աղաջեւ իբրեւ զերիցակիցս և զվկայս չարչարանացն Պերիստոսի , որ և հանգերձեալ փառացն յայտնելոց հազորդ » (Ա . Պետ . Ե . 4) : Եւ սուրբն Պօղոս գերերջանիկ առաքեալն զարժանապատուութիւնն Տիտոսի գործակցի իւրում՝ հրատարակելով գրէ առ կորնթացիս . « Ի՞այց եթէ Տիտոսի ինչ բանիք են , իմ

Հաւասար է և ձեր գործակից ու :
 Եւ սուրբն Դիտնեսիս ՚ի վեր-
 նագիրն թղթոյն որ առ Տիմոթե-
 սս , այսպէս սկսանի . « Ի քահա-
 նայէ ՚Դիտնեսիսուէ՝ առ քահանա-
 յակիցդ մեր Տիմոթեսս ու : Աս-
 տի յայտ է , թէ որ շնորհեացն ըդ
 պատիւ և զիշխանութիւնս ընտ-
 րելոց իւրոց՝ զնոյն և ոչ զբանայ
 յաջորդաց նոցին . և զայս յազա-
 շանս իւր որ առ Հայր գոհութիւ-
 հանգերձ՝ յայտնի արար ասելով .
 « Այս ոչ վասն նոցա միայն աղա-
 շեմ , այլ և վասն ամենայն հա-
 ւատացելոց բանիւն նոցա յիս ո
 (Ծօհ . ժէ . 20) :

Ո այս բարձրագոյն իշխանու-
 թիւն յառաջ քան զկամաւոր
 չարչարանս իւր , Յիսուս փրկի-
 չըն մեր խոստացաւ տալ գլխաւո-
 րին առաքելոց երանելոյն Պետ-

բոսի . և այնու՝ ոչ միայն զբարձր
 պատիւ գլխաւորութեան նորին
 յայտ առներ , այլև իրքեւ փո-
 խարէն ճշմարիտ դաւանութեա-
 նըն նախածանօթ այսր սրանչելի
 խորհրդոյ առներ . որպէս թէ ա-
 սել կամեր Տէրն մեր . ով Պետ-
 րոս նախասկատիւդ յառաքեալ՝
 դու որ զիս Աստուած և Արդի
 Աստուծոյ խաստովանեցար՝ յայտ-
 նութեամբն Նօր Աստուծոյ , ՚ի
 դիմաց համօրէն աշակերտաց ի-
 մոց առելով . « Դու ես Քրիստո-
 սըն Արդի Աստուծոյ կենդանւոյ » ,
 ահա փոխարէն յայտնեմքեղը
 խորհուրդն , որ միայն աստուա-
 ծութեանս է անել . « Օ ի ով կա-
 րէ թողուշ զմեղս , եթէ ոչ միայն
 Աստուած ո . կանխագոյն զայտ
 քեղ տաց իմանալ . իսկ յետ չոր-
 չականաց և թաղման և յարու-

թեան իմոց այնու հետեւ ոչ մի
այնքեզ, այլ և ամենայն աշակեր-
տակցացքոց՝ առաքելոց իմոց հա-
ւասար սրարդեւեցից յայտնա-
պէս : « Տաց քեզ զփականս ար-
քայութեան երկնից . զոր միան-
գամ կապեսցես յերկրի , եղիցի
կապեալ յերկինս . և զոր արձա-
կեսցես յերկրի , եղիցի արձա-
կեալ յերկինս » (Առաք . Ժղ . 19) :

Ես այս երդէ եկեղեցին . « Ոլր
խոստացար տալ զփականս արքա-
յութեան երկնից երանելոյն
Պետրոսի » : Եւ ՚ի Տեսութեան
նոր կտակարտնաց (Հագոր Բ . յե-
րես 22), ՚ի վերաց այսր բնարանի
գրի : « Պետրոս մեծապէս գովեր-
իի գտու , և ընկալաւ զանվրէոլ
խոստուին մեծի մասին պահելոց
նման ՚ի Տեսունէ » : Յայս միտ
ընթանան ամենայն մեկնիչք և

վարդապետք ճշմարտութեան :

Այլ թէ զիանդ զայս խորհուրդ ապաշխարտութեան նախքան զանազարտական չարչարանս իւր Տէրն մեր խոստանայ , և մետ կամաւոր չարչարանացն և հրաշափառ յարութեանն տայ ամենայն ընտրեալ աշակերտաց իւրոց . զի թէպէտ զկնի ընտրելոցն ետ նոցա զօրութիւնն և իշխանութիւնն հանել զգեւոս , և բըժըկել զամենայն ախտս , բայց ոչ կապել և արձակել , ըստ որում գեռ չէր չարչարեալ . վասն զի փրկարար խորհուրդ ապաշխարտութեանն է տիրապէս արդիւնք չարչարանացն Քրիստոսի Տեառն մերոյ , զի նովաւ հաճոյանայ ապաշխարտութիւնն մեր առաջի Նօր Աստուծոյ : Վասն որոյ ՚ի խաչեանտի խնդրելով զթողութի խո-

չահանուացն իւրոց՝ սպարգեւեր
 յոյս թողութեան ապաշխարող
 մեղաւորաց . ըստ որում ճշմա-
 րիս որդի Աստուծոյ՝ գոչեր առ
 Աստուած Հայր . և գոլով մեղ
 միջնորդ հաշութեան՝ աղաչեր
 զնա ներել յանցանաց մերոց : Ա-
 սպաքեն յոյժ սպատշաճաւոր եղեւ
 զկնի յարութեանն տալ զիշխա-
 նութիւնս զայս . զի զզջումն ա-
 սպաշխարութեան մերոյ՝ միջնորդ
 ունելով զիրկագործ չարչարանս ,
 զմահ և զթաղումն Հիսուսի կե-
 նարարին մերոց , ընդունի զաս-
 տուածային ներողութիւնս . ըստ
 անփրես քարոզութեան իւրում
 այսպէս . « Պարու եր չարչարիլ
 Քրիստոսի , և յառնել ՚ի մեռե-
 լոց յաւուր երրորդի , և քարո-
 չել յանուն նորա ասպաշխարու-
 թիւն և թողութիւն մեղաց յա-

մենայն ազգու (' Ե ս - ի . իդ . 46) ,
Եւ յայս դիտաւորութիւն հայի
երգ սուրբ եկեղեցւոյն . « (Օրհ-
նեմք զըեզ անսկիզբն հայր որդ-
ւոյդ միածնի , զոր առաքեցեր ՚ի
դարձումն մոլորեալ ոչխարին .
դարձն և զմեզ ՚ի մեղաց որդւոյ
քո չարչարանօք » : ՚Իննովաց ըդ
գիրս սուրբս յայտնի իսկ է այսա-
մենայն :

Ա երջին օճման խորհրդոյ՝ ՚ի
տեառնե սահմանեալ լինելն ան-
տարակուսելի է . զի առաքեալք
առ ժամանակօք նորին փրկագործ
տնօրէնութեան ՚ի գործ արկու-
նեին զայս : ՚Ապա յայտնի երեւի՝
թէ Հիսուս Տէրն մեր զայս խոր-
հուրդ սահմանեաց , յորժամու-
սուցաներն զգործու պաշտաման
իւրեանց , տալով նոցա զզօրու-
թիւնս և զիշխանութիւնս , որ-

պէս ասաց . “Օ Հիւանդս բժըշ-
կեցէք ո (Մատ . Ժ . 8) : թէ-
պէտ ասոս ոչ որոշի , եթէ ինչ ե-
ղանակաւ կատարէին զայս առ վը-
տանդաւոր հիւանդս , բայց սրբ-
բազան աւետարանիչն Ուարկոս
յայտնի առնել զայս եղանակ ինչ
ասելով . “Եւ օծանելին իւզով
զբազում հիւանդս , և բժշկէին
զնոսա (Ուրլ . Ղ . 43) : Եւ յե-
տոյ ՚ի ձեռն Յակոբայ առաքելոյն
եղրօր Տեռառն հրատարակեալ ե-
ղեւ և մուծաւ յեկեղեցիս , և
դասեցաւ ընդ սրբարար խոր-
հուրդս եկեղեցւոյ :

Արբագործ կարգն ձեռնադ-
րութեան , որով աւանդի հոգե-
ւոր իշխանութիւն , առ ՚ի կա-
տարել օրինապէս զեկեղեցական
պաշտամունս , և աւետարանա-
կան բարողութեամբ հովուելը

Հաւատացեալս, է տիրապէս սահմանեալ ՚ի Քրիստոսէ իբրեւ ՚ի Ճշմարիտքահանացապետէ անտի, որ ՚նախ զաշակերտս իւր ըստ պահանջման առաքելական պաշտօնի կարդաւ յաստիճան առ աստիճան բարձրացուցեալ, ՚ի վերջոյ յաւուր համբարձման հանել զնոսա ՚ի գլուխ լերին ձիթենեաց՝ որ մերձ էր ՚ի գիւղն Շեթանիայ, և ամբարձեալ զաստուածեղէն ձեռքս իւր՝ օրհնեաց զնոսա, տալով նոցա զամենայն աստուածային շնորհս և զամենայն աշտիճանաց բարձրութիւնս . որպէս զի և նոքայաջորդաց իւրեանց ՚ի նոյն օրինակ մատակարարեսցեն զպաշտօն շնորհին : « Եհան զնոսա մինչեւ ՚ի Շեթանիա և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա » (' Ե - Ե . իւր . 50) : Եւ

առաքեալն գրէ առ Տիմոթէոս .
“ Ո՞ի անփոյթ առներ զշնորհացդ՝
որ ’իքեղ են . որ տուաւ քեղ
մարդարէութեամբ ՚ի ձեռնադը-
րութենէ երիցութեան ” (Ա .
ՏԻՄ . Դ . 14) :

Պատկն է խորհուրդ եկեղեց-
ւոյ յարարչագործութեան անդ-
սահմանեալ յիստուծոյ ՚ի վերաց
նախածնողաց մերոց . աստուա-
ծային կամօքն զուգաւորելով ըզ
նոսա յանանջատ միաւորութիւն
և յանբաժաննելի ամուսնութիւն
առ աճելութիւն սերնդոց ազգի
մարդկան : Ուստի Ըդամաց այն
ինչ սթափեալ իբր ՚ի քնոյ , և
տեսեալ զկին իւր զկւաց առ ըն-
թեր իւր՝ ինքեան իսկ համանման ,
և հաճեալ ընականապէս ընդ նա
և սիրեալ զնա իբրեւ զիւր մարմ-
նոյ մասն , սկսաւ մարդարէանալ

յազգեցութենէն Աստուծոյ՝ և
 իբրեւ ՚ի դիմաց Աստուծոյ՝ բար-
 բառելով առ ապագայ սերունդս
 իւր ասէ . « Այս այժմիկ ոսկը¹
 յասկերաց իմոց , և մարմին ՚ի
 մարմնոյ իմոյ . սա կոչեսցի կին , զի
 յառնէ իւրմէ առաւ . վասն այ-
 նորիկ թողցէ այր զհայր իւր և
 զմայր իւր , և երթիցէ զհետ կը-
 նոջ իւրոյ , և եղիցին երկուքն ՚ի
 մարմին մի (՞Օ՞ն . թ . 23) : Եւ
 դայս սուրբ ամուսնութիւն առն
 և կնոջ վերստին հաստատեաց
 հզօրագոյն բանիւ իւրով Տէրն
 մեր Յիսուս , առ անանջատ մի
 աւորութիւն , յասելն վճռաբար .
 « Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ
 մի մարմին . արդ՝ զոր Աստուծած
 զուգեցաց մարդ մի մեկնեսցէ ո
 (Առաք . Ժթ . 6) :
 Ես սկզբանէ աշխարհի զսահ

մանեալն յԱստուծոյ զամուսնա
 կան զայս սուրբ միաւորութիւն,
 կամելով Ծխուսի մուծանել ՚ի
 խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ, ան-
 ձամբ իսկ հաճեցաւ գնալ ՚ի հար-
 սանիսն կանա գալիլեացւոց առ
 ՚ի մեծացուցանել զայս խոր-
 հուրդ՝ և հաստատել առ օրինա-
 ւոր աճումըն բանական սեռիցս
 (ԾօՀ. Է. 1)։ Ո՞ւծ է այս խոր-
 հուրդ ամուսնութեան քրիստո-
 նելոց, որ հայի ՚ի Քրիստոս և յե-
 կեղեցի ։ ըստ առաքելոյն (ԵՇԵ. Է.
 32)։ Եյոինքն նշանակէ ըզ
 հոգեւոր միաւորութիւն Քրիս-
 տոսի ընդ Եկեղեցւոյ իւրոյ ։ զի
 Եկեղեցին է սուրբ կոյս՝ և անա-
 րատ հարսն՝ անմահ Երկնաւոր
 փեսային Քրիստոսի ։ զոր սիրե-
 իքքեւ զիւր մարմին և սնուցա-
 նել խնամօք իւրովիք բարեբարու-

թեան, և դարմանէ կենդանարար
խորհրդով անմահարար մարմնոյ և
արեան իւրոյ, և զարդարէ զանա-
զան պարգեւօք և փառօք (Եշէ.
Ե . 29) : Այսպէս պարտաւորի
իւրաքանչիւր ոք սիրել և դար-
մանել զիւր օրինաւոր կին իբրեւ
զիւր մարմին, ամուսնական իրա-
ւամբ խնամելով և զիջանելով՝ ի
տկարութիւն ընութեան նորին .
և կինն պարտի մեծարել զայր իւր
յամենացնի հնազանդ լինելով,
և երկնչելով յառնէ իւրմէ իր-
բեւ ՚ի խնամածու տեառնէ (Ե-
շէ . Ե . 33) :

Անձ է խորհուրդս այս ՚ի ը-
նորհական օրէնս ՚Վրիստոսի . զի
առն և կնոջ քրիստոնէից ամուս-
նացելոց՝ այս միութիւնն է ընդ
իրեարս, որ աճեցուցանէ զծը-
նունդս հաւատացեալս և բաղ-

մացուցանե՛ զշնորհունակ որդիս
 Աստուծոյ (Պալ. գ. 27)։ Բառ
 ինքեան ընականապէս մեծ է և
 սբանչելի խորհուրդս այս ամուս-
 նութեան. զի երկու անհարք ան-
 ծանօթք իրերաց՝ միանգամայն
 յարին առ միմեանս և սիրայօդ
 կապակցին այնպէս՝ մինչեւ մո-
 ռանալ զաղգականս՝ զբարեկամս՝
 զմերձաւ որս ծանօթս՝ և զոր մե-
 ծըն է զծնօղս անգամ իւրեանց։
 Պաղտնածածուկ ոգեխառնութիւ-
 իմն է այս ծածկեալ ՚ի ընութե-
 մերում. և վերին արարչական
 տեսչութեանն մեծ խորհուրդ՝ ՚ի
 բաղմաւ որութիւն ծննդոց մարդ-
 կան օրինաւոր միաւորութեամբ։
 Արդ՝ եթէ ոք ՚ի կանանց և յա-
 րանց խոտորի յայսր տիրասահման
 օրինաւոր ամուսնութէ, և խառ-
 նակին աղատք ընդ աղասս արտա-

քոյ կանոնաւոր ամուսնութեան ,
և կամ եթէ ոք ընդ օտար ամուս-
նոյ շաղաշարի՝ շուն կոչին այնպի-
սիք և պոռնիկք , մանաւանդ եղ
ծիչք ամուսնական հաւատար-
մութեան , և հակառակք ասո-
ուածային բարեկարգութե . որով
ոչ միայն յանարդեալս դասին ՚ի
բարեմիտ մարդկանէ , այլ և զրկին
յաստուածային շնորհաց և փա-
ռաց՝ անկեալք ընդ դատապար-
տութեամբ ահեղ դատաստանին
Կատուծոյ : «Պատուական է ա-
մուսնութիւնն և սուրբ են ան-
կողինք . բայց դշունս և զալունիկս
դատի Կատուածոյ (ԵՒՐ . ԺՊ . 4) :



ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս զանազանութեան խորհրդոց :

|| Խորհրդոց Եկեղեցւոյ ոմանք
Են Հարկաւորք ամենեցուն, և ո-
մանք Հարկաւորք ոչ ամենեցուն.
ոմանք Են կրկնելի, և ոմանք ոչ
կրկնելի . զորս պարտ է դիտել և
ճանաչել մեզ :

|| Կրտութիւնն է Հարկաւոր
ամենեցուն առ ՚ի փրկիլ ՚ի սկըզբ-
նական մեղաց , և լինել ժառան-
գաւոր աստուածային Հանդեր-
ձեալ փառաց . սա չէ կրկնելի ,
զի խորհուրդ միլրութեան ունի
զիսկական կերպարան փրկարար
խաչին և կամաւոր կենսաձիր
մահուանն ՚Քրիստոսի Տեառն
մերոց : || Եսուի յարարովութեան

անդ խորհրդոյ մլրտութեան ե-
 րիցս ընկղմելն զերեխայն 'ի ջուր
 անդր, նշանակէ զերեքօրեայ թա-
 ղումն փրկչին մերոյ . զի 'ի ձեռն
 կատարման խորհրդոյ մլրտու-
 թեան՝ լինիմք խաչակից և մա-
 հակից Պրիստոսի . որով և փա-
 ռաց նորին ժառանգակից : Ու-
 րեմն որպէս անհնար է վերստին
 խաչիլ Պրիստոսի և 'ի մահ ան-
 դրբ գալ, նոյնպէս միանգամ մը-
 կրտելոցն անհնարին է կրկին ան-
 գամ մլրտիլ, և մտածելն անդամ՝
 է մեղանչումն չարաչար : « Եթէ
 ոչ գիտէք, զի որ միանգամ մլր-
 տեցայք 'ի Պրիստոս Յիսուս՝ 'ի
 մահ անդր նորա մլրտեցայք . թա-
 ղեցայք ընդ նմին մլրտութեամբն
 'ի մահ, և այլն » (Համ. զ. 3 .
 և Եբ . զ. 4) :

'Կրոշմն է հարկաւոր ամենայն

միլլուելոց առ ՚ի զօրանալ շնորհօք
սրբոյ Նոգւոյն և արիանալ ընդ-
դէմ հնարից չարին . և այս իսկ
է անկրկնելի . “ ՚Քանզի անդեղջ
են շնորհք և կոչումն Աստու-
ծոյ ” (Նույն . Ժամ . 29) :

Խորհուրդ հաղորդութե կե-
նարար մարմնոյ և արեանն Յի-
սուսի փրկչին մերոյ՝ է հարկաւոր
ամենայն քրիստոնէից հրաժարե-
լոց ՚ի մեղաց կատարեալ զղջմամբ
առ ՚ի հաղորդակցիլ սրբութեան
և անմահութեան Յիսուսի ՚Քր-
իստոսի . և սա է խորհուրդ կրրկ-
նելի : “ ՚Քանիցս անդամ թէ ու-
տիցէք զհացս զայս , և զքաժակս
ըմպիցէք , զմահ Տեառն պատմե-
ցէք , մինչեւ եկեսցէ նա ” (Ա .
Կորնիլ . Ժամ . 26) :

Ապաշխարութիւնն է հարկա-
ւոր ամենեցուն անկելոց ՚ի ներ-

դործական մեղս . առ ՚ի զզջալ
սրտիւ և խղճիւ մտաց հրաժարիւ
՚ի մեղաց և զհետ լինել դործոց
բարեաց , և կատարեալ խոստու-
վանութիւ առաջի քահանային՝
հասանիւ աստուածային ներու-
ղութեանն . և այս խորհուրդ է
կրկնելի : « Տեր՝ քանիցս անդամ
եթէ մեղիցէ ինձ եղայր իմ , և
թողից նմա , մինչեւ ցեօթն ան-
դամ : Եսէ ցնա Յիսուս ոչ ա-
սեմքեղ՝ թէ մինչեւ ցեօթն ան-
դամ . այլ մինչեւ յեօթանանե-
կին եօթն ո (Առաք . Ժը . 21) :

Վերջին օժման խորհուրդն որ
կատարի ՚ի ձեռն աղօթից կար-
գաւորաց՝ է հարկաւոր վտանգա-
ւոր հիւանդաց՝ վասն թեթեւու-
թեան և բժշկութեան ցաւոցն
և վասն ներողութեան յանցանա-
ցըն , և դիւրութեամբ հասանե-

լոյ հոգւով առ վերջին վախճանին
 աստուածատեսութե : Այս խոր-
 հուրդ չէ այնչափ յոյժ հարկա-
 ւորագոյն ամենեցուն , որպէս ըզ
 նախասացեալ խորհուրդսն , ո-
 րովք միայն լինի փրկութի հոգ-
 ւոց , և ժառանգութիւն ասո-
 ուածացին երանութեան և յա-
 ւիտենական փառաց . և այս խոր-
 հուրդ է կրկնելի՝ և կարեւոր հի-
 ւանդաց կարի տագնապելոց , ե-
 թէ ժամանակն աեղին և միջոցն
 ներեացէ . բայ առաքելոյն բանի .
 « Հիւանգանայցէ ոք 'ի ձէնջ՝ կո-
 չեացէ զերիցունս եկեղեցւոյն՝ և
 արասցեն 'ի վերայ նորա աղօթս .
 օծցեն իւղով յանուն Տեառն . և
 աղօթքն հաւատովք փրկեցեն
 զաշխատեալն . և յարուսցէ զնա
 Տեր , և եթէ մեղս ինչ իցէ գոր-
 ծեալ թողցի նմա » (Աւելա .)

Յակ. Եր. 14) :

Արդ՝ եթէ հիւանդանայցէ
ոք ՚ի ձենց ասէ՝ հիւանդութիւն
վեասակար, յորմէ հրաժեշտ տայ-
ցեն ճարտարութիւնք բժշկաց՝
պարտ է զհողեւոր բժիշկս կո-
չել, որ ոչ կարօտանան բանջարոց
և արմատոց դառն դեղոց և հե-
ղանիւթից առ բժշկութիւն. այլ
աղդու դեղ բժշկութեան նոցա
է շերմեռանդն դիտաւորութիւ-
աղօթք և խնդրուածք սրտի՝ ըստ
Ասրդսի շնորհալոյն մերոյ .
«Օ Ճշմարիտ բժիշկն Յիսուս ՚ի
կարիս հիւանդին խոնարհեցու-
ցանեն ո : Ով սքանչելի զօրու-
թեան աղօթից արժանաւոր և
մաքրասիրտ հողեւոր արանց .
«Օ ի աղօթքն (ասէ առ աքեալն)
հաւատովք՝ փրկեսցեն զաշխա-
տեալն, և յարուսցէ զնա Տէրու :

Ի բնաբանի աստ սուրբ վարդա-
 պետն մեր շնորհալին Արդիս
 բացայացա ասէ . « Եթէ ոչ իւզն
 ինչ տայր զառողջութիւն հիւան-
 դին . այլ՝ անուն Տեառնու : Ա-
 նաւանդ Յիսուս հեղինակն խոր-
 հըրդոց այսպէս աւանդեաց ա-
 ռաբելոց զայս խորհուրդ՝ յասե-
 լլն . « Ի վերայ հիւանդաց ձեռս
 գիցեն և բժշկեացին » (Առք .
 Ժզ. 18) : Ուստի սրբազան առա-
 քեալք մերժ յանուն Տեառն
 բժշկեին զհիւանդս , և մերժ
 ձեռս դնելով : « Յանուն Յիսու-
 սի Քրիստոսի նազովրեցւոյ արի
 և գնաս » , ասացին ՚ի ծնէ կաղին .
 (Գործ . դ . 6) : Եւ եղեւ հօրն
 Պօսղղեայ ՚ի ջերմն և յախտ թան-
 չից հիւանդանալ՝ դնել . առ որ
 մտեալ Պօղոս՝ և կացեալ յաղօ-
 թլու՝ եղ զձեռն և բժշկեաց ըզ

նա ո (Պարծ. իր. 8) :

Իսկ ոմանքը յառաքելոց սրբոց
նկատեալ, զի առ իսրայէլեան
ազգն սովորութիւն էր յարդանօք
պահել և ունիլ զսուրբ իւղ ՚ի
մարդարէից անտի, զոր գործա-
ծէին ՚ի նուիրեալսն Աստուծոյ՝
առ որս գտանիւր և իւղս անու-
շահուս և ծանրագիսս (Ա. Թափ.
Ժղ. 1: Ապչ. ձը. 18: Յօհ. ժը. 3):
Վասն որոյ երբեմն նոյն նիւթավ
իւղոյ մերձենային առ հիւանդս
և օճանէին զնոսա, և այնու բր-
ժըշկէին. բայց զօրութիւնն ելա-
նէր յաղօթից նոցա և յանուա-
նէն Յիսուսի Քրիստոսի :

Ապտ հիւանդաց յոյժ կարե-
ւոր են աղօթք սրբակրօն կարդա-
ւորաց, դնելով զձեռն ՚ի վերայ
ախտացելոց, որպէս Տէրն մեր
Յիսուս վճռելով սկասուիրեաց.

« Ձեռս դնել՝ ի վերայ հիւան-
 դաց » : Ծնորհն բժշկութեան՝
 որ պարզեւի տագնապեալ հի-
 ւանդաց հաւասացելոց , ոչ ըշ-
 ձեռն դնողին է՝ ի վերայ հիւան-
 դին՝ և ոչ խակ աղօթողին . այլ
 երկնաւոր բժշկապետին Յիսու-
 սի Քրիստոսի : Խակ պաշտօնաւեր
 և սրբակրօն երիցունք սպասա-
 ւորք են շնորհին , և արժանահայց
 մաղթանօք և խնդրուածովք իւր-
 եանց՝ արժանաւորս և ընդունա-
 կըս շնորհաց առնեն դհաւատա-
 ցեալն : Աւրեմն այս խորհուրդ
 բժշկութեան անշուշտ կատարի
 առ հիւանդս և տեառնադրու-
 թեամբ սրբոյ խաչի՝ և աղօթիւք,
 զորյաճախ գործադիր լինին ջեր-
 մեռանդ և հոգեւեր աղդ մեր ՚ի
 վասնգաւոր հիւանդս խրեանց՝
 կոչելով զբահանայս և խնդրելով

Հաւատով մեծաւ զաղօթս և զբն-
 թերցմունս սրբոյ Աւետարանի
 բշկութեան . և այս խոկ է վայել
 չական կատարումն խորհրդոյն՝
 յառաջին դարուց անտի եկեղեց-
 ւոյ մեծարեալ . զորմետ գրե իրա-
 ւամբ Նայր Գաբրիէլ ՚ի մեկնու-
 թեան թղթոց Պօղոսի հասոր ա .
 ՚ի թղթահամարի 910 : “Այլ եր-
 բեմն դնելով զձեռն ՚ի վերայ ախ-
 տացելոց որպէս Տէրն խոստացաւ .
 (Վար . Ժղ . 18) : Եւ բազում ան-
 գամ աղօթիւք և տեառնագրու-
 թեամբ խաչի . որ է արարողու-
 թիւն ՚ի կիր արկեալ յառաջին
 դարուց եկեղեցւոյ ս : Տէս զի կա-
 րող է ամենահնար զօրութիւնն
 Յիսուսի թաշկինակաւ և վարշա-
 մակաւ սրբազն առաքելոյն Պօ-
 ղոսի հրաշագործել ՚ի հիւանդա-
 յօժարելով յուղիդ հաւատու

նորին իսկ տադնապելոյն՝ և մաղը
թողացն զնոյն . որպէս գրի ՚ի Գոր-
ծոց . ժթ . 11 : “ Եւ զօրութիւնս
ոչ սակաւս առներ Կատուած ՚ի
ձեռն Պօղոսի . մինչ զի և ՚ի հի-
ւանդս տանիլ ՚ի քրտանէ նորա
թաշկինակս կամ վարշամակս , և
մերժել ՚ի նոցանէ ախտիցն և այ-
սոց չարաց ելանել ” :

Խորհուրդն ձեռնադրութե՞՝
որ է Եօթնաստիճան իշխանութե՞՝
քահանայական կարգի , հարկա-
ւոր է կոչեցելոց և ընտրելոց ՚ի
պաշտօն սրբարար խորհրդոց ըս-
պասաւորութեան՝ և հոգեւոր
հովուութե՞ . որով կարգի հոգե-
ւոր տնտես աստուածային սուրբ
և փրկարար խորհրդոց . և իբրեւ
հովիւ արթուն և քաջ առ ՚ի ա-
ռաջնորդել ՚ի բարի վարս , և խո-
նամել քրիստոնէական ողջամիտ

վարդասլետութեամբ զբանաւոր
հօտն Ճշմարիտ հովուապետին
Քրիստոսի . և այս խորհուրդ չէ
կրկնելի ՚ի վերայ անձին միոյ՝ ըն-
դունողի միանգամ զնոյն շնորհ :
Ա Ո՞ի անփոյթ առներ զշնորհացդ՝
որ ՚ի քեզ են , որ տուաւ քեզ
մարդարեութեամբ ՚ի ձեռնադ-
րութենէ երիցութեան . յայդ
խորհեաց և ՚ի գոյն կանխեսջիր .
զի քո յառաջադիմութիւնդ ա-
մենեցուն յայտնի լիցիո (Ա. Տիմ.
Դ . 14) :

Ըստանօր արժան էր մեզ քա-
ղել զբանս զանազան խրատուց և
յորդորանաց կարեւորագոյն եղե-
լոց այսր հոգեւոր և երկնաքերձ
աստիճանի քահանայութե՝ յաս-
տուածային սրբազան գրոց , և մի-
անգամայն նուիրել առաջի հարց
սրբոց՝ իբրեւ զուղեցոց անմահ

կենդանութեան : Յայց քաջադոյն
 նկատեալ իմ յաստուածաշնորհ
 և գերավսեմ բանս խրատականս
 և յորդորականս , նուիրեալո ՚ի
 սրբազան և ընաշխարհիկ մեծ
 հայրապետէն մերմէ ՚ի Վերսիսէ
 Շնորհալւոյ՝ առ սրբազան դասս
 եպիսկոպոսաց և քահանայից , որ
 է աղդու և բաւական խրատ և
 ածաղդեցիկ յօրդոր առ իւրա-
 քանչիւր աստիճաննաւորս յոյժ
 վայելչական : Օորս եթէ ոք յաս-
 տիճաննաւորաց՝ աշալուրջ մտօք
 ընթերցեալ և արդեամբ կերպա-
 րանեսցի ՚ի նոյն նմանութիւն աստ-
 ուածաշնորհ բանից նորին՝ հար-
 կաւ զհրեշտակացն յանձին բերե-
 զանարատութիւնն , անվրէալ և
 անդատապարտ մնալով ՚ի պաշ-
 տօնի իւրում : Ե վերայ այսց հո-
 գելոյս բանից նորին երկրորդեւ

բարդել և յաւելուլ զբանս մեր
յորդորանաց անսպատշաճ համա-
րեցաք . այլ միայն կնքել զմեծա-
յարդ և զլրկնապատիկ վարձուց
արժանաւորութիւնս սպաշտօնա-
սէր հոգաբարձուաց եկեղեցւոյ՝
բանիւ սրբազն առաքելոյն Պօ-
ղոսի արժան դատեցաք . զոր գը-
րէ նա յայտնելով զարժանին տը-
րիտուր վաստակաւորաց եկեղեց-
ւոյ յասելն : « Որ բարւոք վերա-
կացու լինին երիցունք , կրկին
պատույ արժանի եղիցին . մա-
նաւանդ որ աշխատիցին բանիւ
և վարդապետութեամբ » (Ա.
Տիմ. Ե . 17) :

Պատկին է խորհուրդ եկեղեց-
ւոյ , յորում այր և կին համա-
հաճութեամբ սրտի և կամաց լր-
ծակցին յօրինաւոր և 'ի սուրբ ա-
մուսնութիւն : Այս է ազատաբար

հարկաւոր ամենեցուն, առ բնականաբար վարիլ յաշխարհի . և
 ըստ աստուածային վճռոյն անքակտելի միանալ յանարատ սերկենակցութեան՝ և զուգիլ իրեւնի մի մարմին բարոյական և օրինաւոր միութեամբ, ծնանիլ զորդիս և ձեռնտուութիւ միմեանց սնուցանել զնոսա, և կրթել ՚ի բարի վարս և յաստուածապաշտութեան, լինելով օրինակ բարի վարուց և առաքինութեան առ որդիս իւրեանց . և այս իսկէ անժխտելի և հարկաւորագոյն պարտք հարց և մարց : Եպա բարի է առն և կնոջ բերիլ յօրինաւոր ամուսնական միութիւն, յորոց բողբոջին որդիք առ անընդհատ աճելութիւ սերնդոց մարդկան : « Ո՞չ է բարւոր մարդոյդ միայն լինել . արասցուք դմա օգ-

նական ըստ դմա (Կ. մ. թ. 18) :
 Օ ի եթէ ամուսնանայցես , ոչ
 մեղաք . և եթէ ամուսնանայցէ
 կոյսն , ոչ մեղաւ . բայց նեղութի
 մարմնոյ ունիցին այնպիսիքն , այլ
 ես խնայեցի 'ի ձեզ " (Ա. Կող. է . 28) :

Եւ Երկրորդաբար խորհութեալս
 այս ամուսնութեան է հարկաւոր
 ամենեցուն բնականապէս . դի մի
 լիցի զեղիսիլ 'ի չարագրգիռ ախ-
 տըս պոռնկութեան . այլ որ ան-
 կարանայ ողջախոհութիւն յաղթել
 անյագ կրիցն ցանկութեան՝ կա-
 րէ սանձել զբոնութիւնն նորա
 օրինաւոր ամուսնութիւն : « Ի՞սոց
 վասն պոռնկութիւն իւրաքանչիւր
 ոք զիւր կին կալցի . և իւրաքան-
 չիւր ոք կին՝ զիւր այր կալցի »
 (Ա. Կող. է . 2) : Եւ այս խոր-
 հութե կարէ կրկնիլ 'ի վերայ ա-

մուսնացելոց Եթէ մինն մեռցի .
զի սոյն այս ամուսնական միու-
թիւն առն և կնոջ անկարելի է
բաժանիլ 'ի միմեանց , բայց միայն
մահուամբ միոյն : « Քանզի կին
առնակին 'ի կենդանի այր իւր
կապեալ կայ օրինօք . իսկ Եթէ
մեռցի այրն , արձակեալ է յօրի-
նաց առն : Աղա ուրեմն , մինչ
կենդանի է այրն , շուն կոչի Եթէ
լինիցի առն այլում . և Եթէ մեռ-
ցի այրն՝ աղատ է յօրինացն չհա-
մարեալ շուն՝ Եթէ լիցի առն այ-
լում (Համ . Է . 2 . 3) :

Արդ՝ աղատութիւն ոչ գոյ
յօրէնս ամուսնութեան 'ի հա-
տուցման մշտնջենաւոր պարտուց
ամուսնական օրինաց . որով նը-
ւաճեալ ընդ իշխանութեամբ ի-
րերաց՝ տիրեն 'ի վերայ անձանց
միմեանց . և չեն իսկ աղատք , այլ

ծառայ միմեանց , ցորչափ տիրէ
 'ի նոսա օրէնքը ամուսնական միու-
 թեան (Ա. Կորն . Է . 3 . 4) : Կա-
 մաւ լծակցին ընդ միմեանս յա-
 մուսնութեան ժամու , և ակա-
 մայ պարտաւորին բառնալ զտկա-
 բութիւնս միմեանց 'ի զանազան
 գիպուածս աշխարհային բեր-
 մանց . Եթէ 'ի ծնունդս զաւա-
 կաց՝ ցաւք և տառապանք անհը-
 նարին . իսկ եթէ մահ զաւակաց
 գիպեսցի՝ ողբումն և տրտմութի
 տոչորէ զսիրտս նոցին : Եթէ ան-
 ծնունդ լիցին՝ որչափ հոգք են նո-
 ցա , իբրեւ անմիսիթար յամուս-
 նական վիճակէ անտի : Եւ եթէ
 բաղմածին՝ բաղում աշխատուեց
 առաւել կարօտին 'ի բարւոք դար-
 մանել զնոսա և 'ի դաստիարակել :
 Եթէ համաբարոյ միմեանց պա-
 տահեսցին և քաղցր վշտակից և

կարելից իրերաց, չիք պիտոյ նոցա այլ ևս առիթ և նիւթ բերկը բութեան և միսիթարութեան: Իսկ եթէ ընդ հակառակն պատահեսցի, այսինքն՝ ընթելիւնք անհամբոյրք՝ բարք անզգամբ, վարք չարայոյզք և մոլեկանք, չիք այնուհետեւ նոցա միսիթարութիւն. մահուան միմեանց սպասեն օր աւուր, իբրեւ զալիս ծովու տատանին յանհնարին տառապանս և անհանդուրժելի տուայտանս տիսրութեան. և յայնժամ արժան է զբնակութիւն նոցին կոչել տուն ցաւոց և հոգոց:

Ահա ընդ այսքան դժուարութիւնս նեղութեանց և ընդ ծանս բութիւնս ամուսնական կենցաղավարութեան տարակուսեալ սրբազան առաքելոցն, համարձակեալ ասեին ցՏէր մեր Յիսուս:

“Եթե այդպէս ինչ վնաս իցէ
ընդ այր և ընդ կին՝ լաւ է շա-
մուսնանալ” (Ամբ. Ժթ. 10):
Վասն որոյ Տէրն մեր Յիսուս վե-
րացուցանէ զմիտանոցին յաշխար-
հային բազմահոգ ծփանաց, և
ածէ զնոսա յաստուածային ազա-
տարար օժանդակութիւն, որ է
վիճակ կուսութեան, յորում լի-
նի օգնականութեամբ աստուա-
ծային շնորհաց ճղնիլ և հոգալ
միայն զպաշտօն Աստուծոյ կատա-
րել անզբաղ մտօք. և յաղթել
ախտաւոր կրից բռնութե մարմ-
նոյ և առնուլ զպսակ երանու-
թեան երկնից արքայութեան:
Վասն որոյ զայս ետ պատասխանի
աշակերտաց իւրոց. “Ոչ ամենե-
քեան բաւական են այդմ բանի,
այլ որոց տուեալ է . . . և են
ներքինիք՝ որ զանձինս իւրեանց

արարին ներքինիս վասն արքայութեան երկնից . որ կարողն է տա նիլ՝ տարցի ո (Առաք . ԺՇ . 11 . 21) :

Երանի որ ներքին յօժարութեամբ սրտի զգերաշխարհիկ զայս կրօն հրեշտակային բարձեալ տանի, հրաժարեալ յարագավախճան յունայնութեանց աշխարհային վայելմանց , ժուժկալեալ ողջախոհ մոօք և ՚իբաց մերժել զամենայն առիթս գրգռիչս մարմնական հեշտախտութեանց , և աղատ պահեալ զխորհուրդ մոտցըն ՚ի հոգոց ժամանակաւորաց , պատրաստի միայն ծառայել կամացըն Կոտուծոյ , և անանջատ աշակերտիլ Յիսուսի կենարարին մերոյ և պաշտել զհաճոյս նորին . որպէս բացայացտ ցուցանեն վրկայութիւնքս : Ա Եւ ամենայն որ

ոք եթող զտուն՝ կամ զեղբարս
կամ զըորս կամ զհայր կամ զմայր՝
կամ զկին կամ զօրդիս կամ զա-
գարակս վասն անուան իմոյ, հա-
րիւրապատիկ առցէ և զկեանս
յաւիտենականս ժառանգեսցէ
(Աշտ. Ժթ. 29)։ Այլ կամիմ
զձեղ անհոգս լինել. զի որ անկի-
նըն է, հոգայ զՏեառն՝ թէ որ
պէս հաճոյ լիցի Տեառն. և որ
կանամբին է, հոգայ զաշխարհիս
թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւ-
րումո (Ա. Կոր. Է. 32)։

Օձոխագոյնս լսել եթէ ոք
հաճեսցի յաղագս գերազանց շը-
նորհի կուսութեան, ընթերցցի
զյատուկ ճառս կուսութե Աս-
կեբերանին, զորմէ ընդարձակս
վարդապետէ։ Իսկ մեք Աստու-
ծոյ տամք զիւրաքանչիւրոց զկո-
չումն. եթէ աշխարհականաց ա-

մուսնացելոց ըստ կամացն Առ-
 տուծոյ, և Եթէ կուսանաց հր-
 բաժարելոց կամօքյաշխարհէ ըստ
 հոգեւոր սպասաւորութե՛ պաշ-
 տամանցն Աստուծոյ՝ վկայութիւ-
 սրբազան առաքելոյն Պօղոսի վեր-
 ջացուցեալ զբան մեր . Եթէ,
 « Իւրաքանչիւր ոք զիւր շնորհս
 ունի յԱստուծոյ, ոմն այսպէս և
 ոմն այնպէս » (Ա. Կրէ. Է. 7) :
 Ապա յամենայնի խոնարհեսցուք
 առաջի աստուածային շնորհաց՝
 ներբին կոչման նորին հնազանդե-
 լով : Արթուն մտօք՝ կենդանի
 հաւատով և մաքուր սրտիւ,
 սլինդ կալցուք զաւետարանական
 և զառաքելական ողջամիտ վար-
 դապետութիւնս, և զարբազան
 աւանդութիւնս իբրեւ զգանձաւ
 անկապտելիս ունիլ ՚ի գանձարա-
 նի մտաց մերոց : Եւ ամենայն

զգուշութեամբ պահպանեսցուք
 զհոդիս մեր , զի մի ոք 'ի չարայցղ
 խարդաւանողաց՝ հոգեկորուստ
 խարէութեամբ որսասցի զմեղ 'ի
 ծուղակ կորուտեան , յափշտակեւ
 լով զբարի խորհուրդս մտաց մե-
 րոց և ունայնացուցանելով 'ի
 մեղ զբրիստոսական որբարար շը-
 նորհսն , և ակսակէս մտացածին
 բանահիւսութեամբ մոլորեցու-
 ցեալ զմեղ 'ի զանազան աղանդս
 ընդդէմ քրիստոնէական ճշմարիտ
 վարդապետութեան : Վ ասն որոյ
 'ի վախճան բանիցս զառաքելոյն
 բան վայելուչ դատիմ գրել 'ի
 զգուշութի ամենայն մտաց՝ առ
 հաստապինդ կալ յուղղափառ
 հաւատս ճշմարտութեան , զոր
 ուսաք 'ի շնորհապարգեւ աւե-
 տարանական բանից Յիսուսի կե-
 նարարին մերոյ , և յառաքելոց

սրբոց քարողեալ՝ և ՚ի սրբոց հարց
մերոց բացատրեալ զնոյնս անվը-
րեալ։ “Օ, գոյշ լերուք՝ մի ոք իցէ՝
որ զձեզ կողոպտիցէ ճարտարմը-
տութեամբ և սնուտի խարէու-
թեամբ, որք ըստ մարդկան ա-
ւանդութեան՝ և ըստ տարերց
աշխարհիս, և ոչ ըստ Յիսուսի
՚Քրիստոսի” (ԱՐՆ. Է. 8)։



ရွှေမြန်မာ ဒုက္ခန အမျိုးအစား ပေါ်
 လျော်စွဲ သတ္တုတွေ အာမြန်မာ ပေါ်
 ပေါ် ဒုက္ခန အမျိုးအစား ပေါ်၏ ဒုက္ခန
 ပေါ်မြန်မာ အမျိုးအစား ပေါ် ဖြစ်
 လျော်စွဲ လျော်စွဲ ပေါ်၊ ဒုက္ခန အမျိုး
 အမျိုးအစား ပေါ် ပေါ် ပေါ်မြန်မာ
 ပေါ်မြန်မာ ပေါ် ဒုက္ခန အမျိုးအစား
 ပေါ်၏ ပေါ် ဒုက္ခန အမျိုးအစား
 ပေါ်၏ ပေါ် ဒုက္ခန အမျိုးအစား

1847

